

**ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ
Ռուբեն Սաֆրաստյան**

Նոր տարածաշրջանային քաղաքականություն

Դեռևս 1990-ական թթ. Թուրքիան փորձեց իրականացնել Հարավային Կովկասում իր գերիշխանության հաստատմանը նպատակաուղղված քաղաքականություն: Նա չափազանց ակտիվ էր մեր տարածաշրջանում: Սակայն գործադրած ջանքերը հիմնականում ապարդյուն անցան, թուրքական դիվանագիտությանը չհաջողվեց հասնել ցանկալի արդյունքների: Նա փաստորեն կրեց ծանր պարտություն Կենտրոնական Ասիայում եւ արձանագրեց միայն սահմանափակ ձեռքբերումներ Կովկասում: 1990-ականների վերջին շատ թուրք մասնագետների ու քաղաքական գործիչների համար պարզ դարձավ, որ Թուրքիան չի հասել տարածաշրջանում ղեկավար դեր ստանձնելու իր գլխավոր ռազմավարական նպատակին: Սկսվեցին նոր քաղաքական գծի որոնումները: Այդ իրավիճակից ելք առաջարկեց հայտնի աշխարհաքաղաքագետ, պրոֆ. Ահմեթ Դավուդօղլուն՝ 2001թ. առաջ քաշելով Թուրքիային անմիջականորեն հարող տարածաշրջաններում, առաջին հերթին, իհարկե, Հարավային Կովկասում «Ռազմավարական խորք» ստեղծելու հայեցակարգը, համաձայն որի՝ Թուրքիան հարեւան պետություններից պիտի փորձի ստեղծել տարբեր դաշինքներ, բնականաբար, իր ղեկավարության ներքո: Ստանձնելով հետագայում վարչապետ Էրդողանի խորհրդականի պաշտոնը եւ դառնալով նրա մերձավոր դաշնակիցը՝ Դավուդօղլուն հնարավորություն ստացավ իրականացնելու իր տեսական, աշխարհաքաղաքական դրույթները գործնական քաղաքականության ոլորտում: Դրանց թվին է պատկանում Հարավային Կովկասում Թուրքիայի վարած նոր՝ պառակտողական քաղաքական գիծը:

2007թ. ողջ ընթացքում Թուրքիան փորձեց իրագործել Հարավային Կովկասը պառակտելու իր նոր քաղաքականությունը: Դրա նպատակը մի դաշինքի ստեղծումն է, որը սկզբում կլինի տնտեսական, հետո փորձ կարվի այն վերածել ռազմաքաղաքականի: Այն պետք է ներառի

Վրաստանը եւ Ադրբեջանը, որոնք պետք է լինեն Թուրքիայի կրտսեր դաշնակիցները: Սա աննախադեպ երեւոյթ է Չարավային Կովկասում: Թուրքիան մինչեւ վերջին մեկ տարին չէր համարձակվում դա անել, սակայն քաղաքական վերափոխումների արդյունքում արդեն անցավ ակտիվ գործողությունների: Թե որքանով կհաջողվի Թուրքիային դա իրագործել, այլ հարց է: Ռուսաստանը, որը Չարավային Կովկասում ունի իր ակնհայտ շահերը, հանգիստ չի ընդունի Թուրքիայի այս նոր քաղաքականությունը, եւ վերջինս լուրջ դժվարությունների կհանդիպի իր այդ նոր ռազմավարական նպատակներն իրագործելիս:

Թուրքիան նվազեցրել է ԵՄ-ին ինտեգրվելու ջանքերը

Վերջին շրջանում Թուրքիան ոչ միայն մխրճվում է մերձավոր-արեւելյան քաղաքականության մեջ, այլեւ այնտեղ է սկսել գտնել իր դիրքերն ուժեղացնելու հիմքերը: Թուրքիայի եվրոպական դիվանագիտությունը վերջին շրջանում թուլացել է, քիչ ջանքեր են գործադրվում այդ ուղղությամբ, եւ այս առումով ԵՄ դիրքորոշումը Թուրքիայի համար այն նշանակությունը չունի, ինչ նախկինում: Դրա պատճառներից է նաեւ Թուրքիայի անդամակցության վերաբերյալ եվրոպական ընտանիքի, մասնավորապէս, Ֆրանսիայի դիրքորոշման կոշտացումը:

Յյուսիսային Իրաք

Թուրքիան 100.000-անոց զորք է պահում Իրաքի հետ սահմանի վրա, բայց Յյուսիսային Իրաք մեծ ուժերով չի մտնի: Նա արդեն դիմել է եւ հետագայում էլ կդիմի Իրաքի տարածքում փոքրաքանակ անձնակազմով թուրքական հատուկ ջոկատների գործողությունների, որոնք կստանան աջակցություն թուրքական ռազմաօդային ուժերի կողմից: Լայնածավալ ռազմական գործողություններ չսկսելու համար Թուրքիան մի քանի պատճառ ունի: Նախ՝ ընտրություններից հետո խորհրդարանում կառավարող «Արդարություն եւ զարգացում» կուսակցության պատգամավորների մոտ մեկ երրորդը ծագումով քուրդ է, ինչը քուրդ ընտրողների ձայները ներգրավելու քաղաքականության արդյունք է, եւ կուսակցությունը չի ցանկանա քրդաբնակ տարածքներում ձայներ կորցնել: Բացի դրանից, Իրաքի հյուսիսում ստեղծված քրդական տարածաշրջանային կառավարության հետ Թուրքիան տարեկան մոտ

2.7 միլիարդ դոլարի ապրանքաշրջանառություն ունի, որը նույնպես չարժե կորցնել: Կան նաև տվյալներ, որ Թուրքիայի հարավարեւելյան շրջաններում Իրաքի հյուսիսի քրդաբնակ շրջանների հետ առևտրատնտեսական հարաբերություններում զբաղված են մոտ 200 հազար հոգի: Պատերազմը կհանգեցնի նրանց աշխատանքի կորցնելուն եւ կսրի սոցիալական հարցերը Թուրքիայի այդ թույլ զարգացած շրջաններում:

Եվ ամենակարեւորը: Ըստ մեզ, Թուրքիան օգտագործում է լայնածավալ պատերազմ սկսելու սպառնալիքը՝ որոշակի քաղաքական նպատակների հասնելու, տարածաշրջանում իր դիրքերն ամրապնդելու եւ ցույց տալու, որ ինքն ուժի կենտրոն է:

106-րդ բանաձեւ

ԱՄՆ Կոնգրեսի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի կողմից 106-րդ բանաձեւի ընդունումը ցույց տվեց հայկական գործոնի դերն աշխարհում: Հայկական գործոնն աշխարհում ունի իր տեղը, եւ Թուրքիան միայն Յուլիսային Իրաքում ռազմական գործողություններ սկսելու սպառնալիքը կիրառելով կարողացավ դանդաղեցնել Կոնգրեսի լիազույնար նիստում այդ բանաձեւի ընդունման գործընթացը: Այդուհանդերձ, բանաձեւի ընդունումը նշանակում է, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը կշարունակվի եւ ավելի լայնածավալ կլինի:

Հասկանալի է, որ ԱՄՆ-ի նման պետությունը չի կարող որեւէ քաղաքական գիծ մշակել, որը չի բխում սեփական շահերից: 106-րդ բանաձեւի ընդունումը, բնականաբար, բխում էր ամերիկյան շահերից. բանաձեւին կողմ քվեարկող կոնգրեսականները պաշտպանում են ԱՄՆ շահերը՝ որպես ժողովրդավարության կարեւորագույն ջատագովի, դեմ արտահայտվողները կրկին հանդես են գալիս իրենց երկրի շահերից՝ աշխարհաքաղաքական, տարածաշրջանային առումներով: Միաժամանակ, ամերիկյան եւ եվրոպական հասարակական կարծիքը քաջ գիտակցում է, որ եթե չդատապարտվեն նախկինում կատարված ոճիրները, հնարավոր չի լինի ապագայում դրանք կանխել:

Հայ-թուրքական հարաբերություններ

Հայաստանը հանդես է գալիս թուրքիայի հետ առանց նախապայմանների դիվանագիտական հարաբերություններ հաստատելու օգտին, ինչպես դա ամրագրված է ՀՀ ազգային անվտանգության հայեցակարգի դրույթներում: Թուրքիայի նկատմամբ Հայաստանի որդեգրած քաղաքականությունը լիովին բխում է ժամանակակից միջազգային իրավունքի աշխարհընկալման սկզբունքներից, ինչպես նաև Հայաստանի շահերից: Սակայն թուրքիան վարում է Հարավային Կովկասը պառակտելու եւ Հայաստանը մեկուսացնելու քաղաքականություն: Նա հրաժարվում է Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատել եւ բացել հայ-թուրքական սահմանը՝ պայմանավորելով դա մի շարք նախապայմաններով: Այդ քաղաքականությունը կարելի է բնութագրել որպես Հայաստանի նկատմամբ բացահայտ ճնշման կամ հարկադրման քաղաքականություն:

Այս տարիների ընթացքում թուրքիայում ոչ մի քաղաքական ուժ չի ներկայացրել Հայաստանի հետ հարաբերությունների՝ երկրի պաշտոնական մոտեցմանը այլընտրանքային առաջարկ: Թերեւս, արժե միայն հիշատակել, որ ներկայումս կառավարող «Արդարություն եւ զարգացում» կուսակցության ներկայացուցիչները միակն էին, որոնք ժամանակին աննախադեպ հայտարարություն էին արել, որը տարբերվում էր Հայաստանի նկատմամբ պաշտոնական դիրքորոշումից. 2002-ի խորհրդարանական ընտրություններից առաջ կուսակցության երրորդ դեմքը՝ Ալի Բաբաջանը, որը ներկայումս զբաղեցնում է արտգործնախարարի պաշտոնը, հայտարարել էր, թե Հայաստանի հետ հարաբերություններում պետք է մի կողմ թողնել քաղաքականությունը եւ հենվել տնտեսական շահերի վրա: Սա կարող էր Հայաստանի հետ հարաբերությունների նորմալացման ճանապարհի դառնալ, բայց իշխանության գալուց հետո նրանք հրաժարվեցին այս հայտարարության տրամաբանությունից:

Թուրքիայի նման մոտեցումը վերջերս դատապարտվեց Եվրամիության կողմից (հիշեցնենք, որ ԵՄ անդամության ճանապարհին թուրքիան վերցրել է հարեւանների հետ հարաբերությունները նորմալացնելու պարտավորություն): Այս առումով, ի դեպ, մեզ համար նպաստավոր իրավիճակ է ստեղծվում հնարավոր դաշնակիցների հետ լայն երկխոսություն ծավալել թուրքիայի՝ Հարավային Կովկասում պառակտողական եւ

Հայաստանի նկատմամբ մեկուսացման ու հարկադրման քաղաքականությանը հակազդելու նպատակով:

Մեկ այլ հանգամանք էլ: Մենք այսօր պատրաստ ենք թուրքերի հետ բաց հասարակական երկխոսության, քանի որ, պարզ լեզվով ասած՝ ճշմարտությունը մեր կողմն է: Թուրքական հասարակությունը նույնպես աստիճանաբար փոփոխության է ենթարկվում. նվազում է պաշտոնական քաղաքականության ազդեցությունը, առաջանում են ակտիվ եւ առողջ հասարակական խմբավորումներ: Ուստի, եթե մենք կարողանանք նրանց հետ շփման եզրեր գտնել, երկու հասարակությունների միջեւ առողջ երկխոսություն սկսել, ապա, թերեւս, հնարավոր կլինի համատեղ ջանքերով հասնել նորմալ հարաբերությունների հաստատմանը:

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՓՈՐՁԸ **Արաքս Փաշայան**

2007թ. նոյեմբերի 17-19-ը Բաքվում կայացավ Բարեկամության, եղբայրության եւ համագործակցության թուրքախոս երկրների եւ համայնքների կազմակերպության XI կոնգրեսը: Հիշյալ ձեւաչափի հանդիպումներ որոշակի պարբերականությամբ տեղի են ունենում Թուրքիայում 1993-ից ի վեր, եւ առաջին անգամ է, որ այն կազմակերպվեց Թուրքիայի սահմաններից դուրս՝ Ադրբեջանում: Կոնգրեսին մասնակցում էին ավելի քան 500 պատվիրակներ 30 երկրներից եւ թուրքալեզու շրջաններից: Հանդիպմանը ներկա էին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը, Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ էրդողանը, նախկին նախագահ Սուլեյման Դեմիրելը, այսպես կոչված Յյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության նախագահ Մեհմեդ Ալի Թալաթը, Ղազախստանի, Ղրղզստանի, Թուրքմենստանի, Ուզբեկստանի, Մոնղոլիայի պետական-կառավարական պաշտոնյաներ, ներկայացուցիչներ Ռուսաստանի թուրքալեզու մարզերից (Թաթարստան, Ալթայ, Կաբարդինա-Բալկարիա, Դաղստան, Չուվաշիա, Կարաչաեւո-Չերքեզիա, Սիբիր), նաեւ՝ Ուկրաինայի (Ղրիմի), ԱՄՆ-ի, Մերձավոր եւ Միջին Արեւելքի, Ռումինիայի, Բուլղարիայի, Հունաստանի թուրքական համայնքների պատվիրակներ:

Հանդիպման նպատակն էր սերտացնել ընդհանուր պատմական ժառանգություն, լեզու եւ մշակույթ ունեցող թուրքախոս երկրների եւ համայնքների հարաբերություններն ամենատարբեր ոլորտներում, հնարավորություններ ստեղծել փոխանակելու տեղեկատվություն, զարգացնելու տնտեսական համագործակցությունը, քարոզելու թուրքական մշակույթը, ուղիներ եւ մեխանիզմներ մշակել՝ լուծելու համընդհանուր թուրքական հիմնահարցերը: Քննարկվեցին նաեւ թուրք փոքրամասնություններին (Իրաքի, Աֆղանստանի, Վրաստանի եւ այլն) վերաբերող խնդիրներ, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի կողմից ադրբեջանական տարածքների «օկուպացման» հարցը:

Հանդիպման առանցքային կողմը թուրքախոս պետությունների ինստիտուցիոնալ համագործակցության՝ Թուրքիայի մշակած հայեցա-

կարգի ներկայացումն էր: Կոնգրեսում ելույթ ունենալով՝ Էրդողանն առաջարկեց ստեղծել թուրքախոս պետությունների քաղաքական մի կառույց՝ միավորելու ջանքերը հատկապես արտաքին քաղաքականության ոլորտում, որտեղ Թուրքիայի տեսանկյունից գլխավորապես կարելու է Իրաքի եւ պաղեստինա-իսրայելական հակամարտությանն առնչվող խնդիրները: Նրա համոզմամբ՝ եթե կա անգլիախոս, ֆրանսիախոս եւ իսպանախոս երկրների՝ մեկ լեզվի եւ մշակույթի շուրջ համախմբվելու նախադեպ, ուրեմն կարող են միավորվել նաեւ թուրքախոս երկրները:

Թուրքախոս երկրների քաղաքական կառույց ստեղծելու ծրագիրը Թուրքիայի կողմից պաշտոնապես առաջարկվել է 2006թ. սեպտեմբերին Անթալիայում թուրքախոս երկրների X կոնգրեսի ժամանակ: Գիտակցելով, որ իրական միասնության համար բացակայում են տնտեսական եւ ռազմաքաղաքական նախադրյալները, Անկարան համագործակցության առաջին փուլի համար թուրքալեզու պետություններին առաջարկում է մեխանիզմներ մշակել արտաքին քաղաքականությունը կոորդինացնելու ոլորտում:

Էրդողանը, ըստ էության, կոչ է անում վերակենդանացնել կորսված հնարավորությունները: Խորհրդային Միության փլուզումից անմիջապես հետո Թուրքիան փորձեց ստեղծել Հարավային Կովկասի եւ Կենտրոնական Ասիայի թուրքալեզու երկրների դաշինք: Այդ շրջանում շեշտը դրվում էր տնտեսական եւ ռազմաքաղաքական համագործակցության վրա: Սակայն Թուրքիայի առաջ ծառայած տնտեսական դժվարությունները, ներքաղաքական խնդիրներն ու աշխարհաքաղաքական իրողությունները ձախողեցին այդ գաղափարը:

Ներկայումս Թուրքիան, որոշակիորեն հաղթահարելով այդ խնդրում առկա խոչընդոտները, ամեն կերպ ձգտում է գործնականում կյանքի կոչել համաթուրքականության իր ավանդական հայեցակարգը: Այս հարցում զգալի դեր են խաղում նաեւ արտաքին գործոնները: ԱՄՆ-ի եւ Եվրամիության հետ ունեցած որոշակի դժվարությունների արդյունքում՝ Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ աստիճանաբար ավելի տիրապետող են դառնում թուրքական եւ Մերձավոր ու միջինարեւելյան ուղղությունները:

Թուրքիայի ներկայիս իշխանությունների համոզմամբ՝ նախագահ Ահմադ Նեջդեթ Սեզերի օրոք հարաբերությունները հետխորհրդային Կենտրոնական Ասիայի երկրների հետ ոչ առաջնահերթ տեղ են

զբաղեցրել, մինչդեռ ներկայումս այդ երկրների հետ հարաբերությունները կարիք ունեն վերարժեւորման, այնպես, ինչպես նախագահ Ս.Դեմիրելի (1993–2000) օրոք էր:

Ռազմաքաղաքական ոլորտում համագործակցության թուրքիայի առաջարկին թուրքախոս պետություններից առաջինն արձագանքեց Ադրբեջանը, եւ պատահական չէ, որ հանդիպումը կազմակերպվել էր հենց Բաքվում: Վերջին շրջանում թուրքական ֆորումներում Ի.Ալիևը հաճախ է նշում, որ թուրքալեզու շրջանակների խնդիրները պետք է դիտարկվեն որպես ընդհանուր խնդիրներ: Նույն հռետորականությամբ նա միջազգային իսլամական ֆորումներում նշում է, որ *ուլմայի* խնդիրները բոլոր մահմեդական ժողովուրդների խնդիրներն են: Բնականաբար, Բաքուն նպատակ ունի օգտագործել թուրքական երկրների ֆորումներն ու հնարավորությունները, մասնավորապես, Ղարաբաղյան հիմնահարցը շահարկելու համար, այնպես, ինչպես օգտագործում է Իսլամական կոնֆերանս կազմակերպության ամբիոնը:

Կասպյան հետազոտությունների թինկ-թանկի նախագահ Վաֆա Գուլուզադեի համոզմամբ՝ թուրքախոս երկրների համար շատ կարեւոր է սերտ համագործակցությունը հենց թուրքիայի հետ, քանի որ թուրքիան օրինակելի մոդել է թուրքալեզու հանրապետությունների համար՝ հաշվի առնելով ժողովրդավարության, արեւմտյան կողմնորոշման, տնտեսական առաջընթացի թուրքիայի փորձը: Բացի այդ, այն կարող է այլընտրանքային տրանզիտ դառնալ էներգետիկ ռեսուրսներով հարուստ կենտրոնաասիական երկրների համար, որպեսզի նրանք նվազ կախվածության մեջ լինեն Ռուսաստանից: Միեւնույն ժամանակ, ըստ Գուլուզադեի, նախկին խորհրդային հանրապետությունները չպետք է թուրքիան դիտարկեն իբրեւ «մեծ եղբայր»՝ փոխարինելով այն Ռուսաստանով:

Ադրբեջանի կողմից թուրքիայի ընկալումը համարժեք է Գուլուզադեի դիտարկմանը: Մինչդեռ ԱՊՀ կառույցին անդամագրված կենտրոնաասիական հանրապետությունների դիրքորոշումը թուրքիայի եւ նրա կողմից առաջ քաշվող ծրագրերի նկատմամբ ավելի քան զգուշավոր է: Հատկանշական է, որ առաջիկայում Էրդողանը եւ Գյուլը ծրագրում են այցելել այս տարածաշրջան՝ ապագա քաղաքական կազմակերպության հարցում աջակցություն ստանալու համար:

Անկարան ձգտում է հարթել նաեւ այն անհամաձայնությունները, որ կան թուրքալեզու շրջանակներում: Դրանք մասնավորապես առնչվում

են սահմանային խնդիրների վերաբերյալ Ադրբեջանի եւ Թուրքմենստանի, ինչպես նաեւ Ղրղըզստանի եւ Ուզբեկստանի տարածայնություններին: Ենթադրվում է, որ հնարավոր կլինի հարթել Կասպյան հիմնահարցերում Ռուսաստանի եւ Իրանի հետ Ադրբեջանի ու Թուրքմենստանի ունեցած խնդիրները: Առանձին հակասություններ կան նաեւ Ուզբեկստանի եւ Թուրքիայի միջեւ, ինչը կապված է վերջինիս կողմից Ուզբեկստանում մարդու իրավունքների ոլորտում առկա խախտումներն արձանագրելու հետ: Տաշքենդին անհանգստացնում են նաեւ Ուզբեկստանում իրականացվող սոցիալական եւ կրոնական ուղղվածությամբ թուրքական առանձին ծրագրեր: Պատահական չէ, որ ո՛չ Ուզբեկստանի եւ ո՛չ էլ Թուրքմենստանի նախագահները չէին մասնակցում Բաքվի հանդիպմանը:

Չնայած թուրքախոս երկրների հանդիպումների ընդարձակ եւ հավակնոտ օրակարգերին, դրանք նախկինում ի վիճակի չեն եղել գործնականում իրականացնել իրենց ընդունած որոշումները: Համեմայնդեպս, առաջին քայլերը թուրքախոս երկրների միավորման ուղղությամբ արվեցին հենց Բաքվի հանդիպմանը, որի ավարտին ընդունված փաստաթղթում որոշում կայացվեց ինստիտուցիոնալացնել թուրքալեզու պետությունների ղեկավարների գագաթաժողովները՝ հիմնելով մշտական քարտուղարություն, որը կփորձի կազմավորել ապագա կառույցը: Գործող քարտուղարության (որն, ամենայն հավանականությամբ, կգործի Ստամբուլում) պաշտոնական բացումը տեղի կունենա երկու ամիս անց՝ թուրքական պետությունների ղեկավարների գագաթաժողովին:

Բաքվի հանդիպմանը Թուրքիայի խորհրդարանի խոսնակ Ա.Բույուքբայան առաջարկեց Եվրախորհրդարանի նմանությամբ ստեղծել համաթուրքական հիսուն տեղանոց խորհրդարան: Այն կգործի Ստամբուլում, իսկ նրա քվոտաները կբաշխվեն ըստ տվյալ երկրի բնակչության թվաքանակի: Բացի այդ, քննարկվեց համաթուրքական օլիմպիական խաղերի կազմակերպման, միջազգային թուրքական հեռուստաընկերության եւ ռադիոընկերության հիմնման հարցը: Անկարան առաջարկեց թուրքերենը դարձնել միջազգային թուրքական կազմակերպությունների պաշտոնական լեզու:

Կարելի է ասել, որ միջազգային թուրքական կառույց ստեղծելու գաղափարը Էրդողանի համար դարձել է *idee fixe*: Որքանով են իրատեսական զգալի ֆինանսական եւ այլ կարգի ռեսուրսներ պահանջող

համաթուրքական ծրագրերն այժմ, ցույց կտա ժամանակը: Սակայն մի բան պարզ է. Անկարան ձտում է միջազգային կազմակերպության միջոցով լեգիտիմացնել իր դիրքորոշումներն, առաջին հերթին, արտաքին քաղաքական հարցերում (Կիպրոսի եւ Իրաքյան Քուրդիստանի, Լեռնային Ղարաբաղի, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման եւ այլն): Եթե Թուրքիային իսկապես հաջողվի այդ հարցերի շուրջ ձեւավորել համաթուրքական միասնական դիրքորոշում, ապա դա լուրջ նախադրյալներ կստեղծի նրա էքսպանսիոնիստական հետագա քայլերի համար: Եվ բնական է, որ Թուրքիան երբեք առիթը բաց չի թողնում գերակայություն ունենալ աշխարհի շուրջ 200 մլն թուրքալեզու ժողովուրդների վրա:

ԱՐՄԱՏՆԵՐԻ ՈՐՈՆՈՒՄ.
Հիշողության դրսևորումներ
իսլամացված հայերի սերունդներում
Ռուբեն Մելքոնյան

Թուրքիայում ապրող բռնի իսլամացված հայերի եւ նրանց սերունդների մեջ արդեն տեսական ժամանակ է, ինչ ընթանում են տարբեր հետաքրքիր գործընթացներ, որոնք ուղղակի եւ անուղղակի վկայում են նրանց մեջ ազգային ինքնագիտակցության եւ հիշողության որոշակի շերտերի պահպանման մասին: Մասնավորապես, «ինքնության ճգնաժամի» քննարկումների ծավալմանը զուգընթաց ի հայտ են գալիս եւ արդեն մամուլում տարածվում են իսլամացված հայերի պատմություններ, տպագրվում են հայտարարություններ, որոնցով մարդիկ փնտրում են իրենց արմատները, կորցրած ազգականներին: Ստամբուլում հրատարակվող «Ակոս» թերթը լի է այդպիսի հայտարարություններով եւ, ինչպես նկատել էր Հրանտ Դինքը, «Այսօր Թուրքիայում շատերն են դեգերում իրենց ինքնության լաբիրինթոսում»: Հետաքրքիր է եւ միեւնույն ժամանակ բնական, որ փնտրելու այս գործընթացն ավելի շատ տարածված է իսլամացված հայերի եւ նրանց սերունդների շրջանում:

Բացի այդ, այսօր ի հայտ են գալիս նաեւ հայկական ծագման որոշակի տոկոս ունեցող խառնածիններ, որոնց մեջ եւս նկատվում են «էթնիկ ճգնաժամին» բնորոշ երեւոյթներ: Թուրքիայում եւ դրա սահմաններից դուրս միեւնույն հայկական արմատ ունեցող այս մարդկանց գոյությունը փաստ է, որին պետք է մոտենալ ոչ միայն գիտական, այլեւ բարոյական եւ հոգեբանական տեսանկյունից: Խեղված ինքնությամբ, ուժացման տարբեր աստիճաններում գտնվող հայերի եւ նրանց սերունդների հարցը, մեր կարծիքով, կարիք ունի լուրջ, բազմակողմանի ուսումնասիրության, որին նոր միայն կարող են հետեւել գնահատականներ, դատողություններ:

Թուրքիայում ինքնության հարցի օրեցօր նոր ծավալներ ընդգրկելու մի նշան կարելի է համարել «Փնտրում են ազգականիս» ծրագիրը, որը ստեղծվել է 2006թ. Ստամբուլում: Ծրագրի մտահղացումը եւ կազմակերպումը պատկանում է տեղի հայկական համայնքի երիտասարդական «Հատիկ» եւ «Նոր զարթոնք» խմբերին: Այն նպատակ ունի հայտարարությունների տարածման միջոցով օգնել մարդկանց, որպեսզի գտնեն իրենց

կորցրած ազգականներին, որոնց գոյության մասին շատ հաճախ այդ մարդիկ տեղեկացել են իրենց ավագներից¹: «Փնտրում են ազգականիս» ծրագրում, ի դեպ, բավական մեծ դեր ունի Ստամբուլի «Ակոս» շաբաթաթերթը, իսկ ծրագրի կոորդինատորը նույն թերթի աշխատակից Արիս Նալջըն է:

Սակայն պետք է նշել, որ հայերիս պես աշխարհասփյուռ մի ազգի համար այս երեւոյթը նորություն չէ. դեռեւս 1960-ական թթ. երկրորդ կեսին Խորհրդային Հայաստանում «Հայրենիքի ձայն» թերթում նույնպես կազմակերպվել էր նմանատիպ մի ծրագիր, որը կոչվում էր «Փնտրում են հարազատներին»:

Թուրքական «Էվրենսել հայաթ» թերթի նոյեմբերի 18-ի համարում խոսելով ծրագրի ստեղծման մասին՝ Արիս Նալջըն նշում է, որ սկզբնապես իրենց նպատակներից է եղել «Ակոս» թերթին տրված նմանատիպ բազմաթիվ հայտարարությունները, որոնցով մարդիկ փնտրում են իրենց կորած ազգականներին եւ արմատները, ավելի տարածական դարձնելը: «Այդ ժամանակաշրջանում, – ասում է Արիս Նալջըն, – կարողացանք 500 հայտարարություն փակցնել Ստամբուլի փողոցներում, եւ նույնիսկ Անգլիայից տուրիստական նպատակով եկած մեկը այդ հայտարարությունների միջոցով պատահաբար գտավ իր ազգականին»: Ըստ Նալջընի՝ իրենք, ցանկանալով ընդլայնել ծրագրի աշխարհագրությունը, նպատակ են դրել այն տարածել նաեւ Ստամբուլից դուրս՝ Եվրոպայում, Լիբանանում, Թուրքիայի այլ վայրերում: Կենտրոնացնելով իրենց բոլոր միջոցները եւ կապերը՝ նրանց հաջողվել է իրականացնել դա եւ, ինչպես ասում է Նալջըն, ծրագիրը ձեռք է բերել միջազգային մասշտաբ: Այն ներկայումս տարածվել է Բեռլինում, Քյոլնում, Փարիզում, Բեյրութում,

¹ Այսօր Թուրքիայում գնալով ավելանում է այն մարդկանց թիվը, որոնք սկսում են խոստովանել, որ ծագումով հայ են կամ ունեն հայ նախնիներ: Այս գործընթացում հատկապես աչքի է զարնում այն, որ տոկոսային հարաբերակցությամբ զգալիորեն ավելի մեծ թիվ են կազմում հատկապես հայ տատիկները, որոնք Հայոց ցեղասպանության ժամանակ առեւանգված եւ բռնի իսլամացված հայ աղջիկ երեխաներն ու կանայք են: Նրանց ինքնախոստովանական պատմությունները մեծ հետաքրքրություն են արժեք են ներկայացնում եւ տեղավորվում են վերջերս լայն ծավալներ ստացող «բանավոր պատմություն» հասկացողության շրջանակներում: Պետք է հատկապես հաշվի առնել, որ այդ սերնդի մեծ մասն արդեն մահացել է ու նրանցից կամ ողջ մնացածներից գրանցած յուրաքանչյուր հուշ ցեղասպանության, բռնի իսլամացման մասին մեծ արժեք ունի:

մի խոսքով՝ այն վայրերում, ուր ապրում են հայերի հոծ խմբեր: Բաժանվել է ավելի քան 5000 հայտարարություն՝ ֆրանսերեն, գերմաներեն, արաբերեն լեզուներով: Ստեղծվել է նաև ինտերնետային կայք, որտեղ մարդիկ կարող են հայտարարություն տալ, ինչպես նաև իրենց ազգականներին փնտրել արդեն տրված հայտարարություններում, ընդ որում՝ մի քանի լեզուներով: Կազմակերպիչները նպատակ ունեն առաջիկա տարում կայքը գործարկել նաև Հայաստանում եւ հայերենով:

Այս ծրագրի ստեղծումը եւ զարգացումը, բնականաբար, ունի նաև որոշակի հասարակական պահանջարկ եւ կարող է շատ հետաքրքիր ու խոսուն ցուցանիշ դառնալ Թուրքիայի բռնի իսլամացված կամ հայկական ծագման որոշ տոկոս ունեցող մարդկանց շրջանում կատարվող գործընթացները հասկանալու համար: Բավական խոսուն է այն փաստը, որ այս ծրագիրն իրականացվում է հենց հայերի շրջապատում եւ ձնագնդի էֆեկտով լայն տարածում գտնում ոչ միայն Թուրքիայում, այլև աշխարհի տարբեր մասերում ապրող մեր ազգակիցների շրջանում: Փաստերը ցույց են տալիս, որ հայ պապիկ, տատիկ ունեցողները բավական մեծ թիվ են կազմում, որոնց կամ նոր է ասվել իրենց ընտանիքի մասին իրականությունը, կամ նրանք իմացել են, բայց վախեցել են արտահայտվել: Ահա հենց այս մարդիկ են, որ տեղեկանալով տասնամյակներ շարունակ թաքցված եւ գաղտնի պահված իրենց իրական ինքնության մասին, ապրում են «ինքության ճգնաժամ»:

Արիս Նալջըն մեկնաբանում է, որ արտերկրում ծրագրի տարածումն այնքան էլ դժվար չի եղել: «Ի վերջո, աշխարհի բոլոր անկյուններում էլ հայեր կան»,–ասում է նա եւ հավելում նաև, որ սկզբում զգուշացել են, թե ոմանք այս հայտարարությունների տակ կարող են ուրիշ նպատակներ տեսնել, սակայն սա հետագայում հաղթահարել են: Նալջըն շեշտում է, որ հիմնական նպատակն է՝ մի կողմից իրոք նպաստել, որ մարդիկ գտնեն իրենց ազգականներին, իսկ մյուս կողմից ի ցույց հանել այս իրողությունը: «Ինչքան էլ ուզում է լինի փողոցներում մեր տված հայտարարությունների թիվը, դրանց միջոցով ազգականին գտնելու հույսը գուցե 1 տոկոս է, սակայն այդ 1 տոկոսանոց հույսը այն ուժն է, որը քեզ դրդում է այդ բանն անել»:

Նալջըն նշում է նաև, որ այս ծրագրի շնորհիվ արդեն մի շարք մարդիկ գտել են իրենց ազգականներին, եւ նրանց պատմությունները տպագրվում են «Ակոս» թերթում: Այս մասին մի փաստագրական տեսանյութ է պատրաստել նաև հեղինակավոր BBC հեռուստատալիքը, որի աշխատակիցներից մեկն էլ հենց եղել է սյուժեի գլխավոր հերոսը: Ըստ

Նալչըի, մինչեւ այսօր էլ չի դադարում այն մարդկանց հոսքը, որոնք գալով «Ակոսի» խմբագրություն՝ պատմում են, որ իրենց տատիկը հայ է: Բայց այս ամենը չպետք է սխալ պատկերացում ստեղծի, թե Ստամբուլի հայ համայնքը շատ համարձակ է եւ պայմանները նրան թույլ են տալիս դիմելու նման խիզախ քայլերի: Ընդհակառակը, ըստ Նալչըի՝ հայկական համայնքը, լինելով ավելի զգուշավոր, իր մեջ պարփակված, դեմ է նման պատմությունների հրապարակայնացմանը եւ կողմնակից է սրանից աղմուկ չստեղծելուն՝ վախենալով դրան հաջորդող բոլոր հավանական հետեւանքներից:

Եվ վերջում, կարծում ենք, ավելորդ չէ թարգմանաբար մեջբերել այդ կայքում տեղադրված բազմաթիվ հայտարարություններից մեկը՝ միաժամանակ նշելով, որ նմանատիպ հայտարարությունների թիվը գնալով ավելանում է: Այս հայտարարություններն, իրենց հերթին, կարող են դառնալ առանձին եւ հետաքրքիր ուսումնասիրության նյութ՝ հազեցած ինչպես փաստագրական, այնպես էլ ազգագրական տարրերով:

«Ես ծնվել եմ Էյլազիզի Մադեն գավառում: Գիտեմ, որ մայրս հայ է եւ 1915թ. սեւ օրերին ստիպված է եղել բաժանվել ամբողջ ընտանիքից: Մայրս ասում էր, որ իր ընտանիքից ողջ մնացածները Մարսելում եւ ԱՄՆ-ում են: Գիտեմ, որ նա Էյլազիզի Թադըմ գյուղից է եւ անունը Եղիսափերթ Թունասյան է եղել: Սրանից բացի այլ տեղեկություն չունեմ: Մայրս մահացավ 1978թ.՝ մոր, հոր եւ եղբայրների կարոտը սրտում: Ամեն անգամ, երբ հիշում եմ մորս մասին, շատ եմ վշտանում, որ նա մահացավ՝ իր ընտանիքի կարոտը սրտում: Ցանկանում եմ գտնել մորս կողմի բարեկամներին: Խնդրում եմ այս հարցում ինձ օգնեք: Էքրեմ Ու.»:

**ԱՂՐԲԵՋԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ
ՍԵՒԱԿ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ**

2007թ. նոյեմբերին պարզ դարձավ, որ Աղբբեջանի պետական նավթային ընկերությունը (ԱՊՆԸ) կարող է դառնալ վրացական մասնավորեցվող 24 շրջանային գազաբաշխիչ ընկերությունների սեփականատերը: Առհասարակ, վերջին ժամանակներս ԱՊՆԸ-ն ակտիվացրել է իր գործունեությունը Հարավային Կովկասում, եւ Աղբբեջանի էներգետիկ ներդրումները, մանավանդ Վրաստանում, զուրկ չեն քաղաքական նկատառումներից:

Ղազախական մոդելի կիրառումը

Նավթի արտադրության եւ արտահանման ծավալների աճն Աղբբեջանի համար ներդրումային նախագծերի իրականացման բարենպաստ հնարավորություններ է ստեղծել թե՛ Աղբբեջանում, թե՛ երկրի տարածքից դուրս: 2007-ն աչքի ընկավ աղբբեջանական կողմի ներդրումային քաղաքականության ակտիվացմամբ, ինչը մի շարք առումներով նման է Աստանայի էներգետիկ քաղաքականությանը, որը կարելի է բնորոշել հետեւյալ կերպ. ազդեցիկ ներկայություն այն բոլոր երկրներում, որոնք անգամ տեսականորեն կարող են դառնալ ղազախական նավթի եւ գազի օգտագործող, վերավաճառող, վերամշակող, տարանցող պետություններ: Այս մոդելի արդյունքում 2005–2007թթ. Աստանայի ներդրումներն այլ երկրների էներգետիկ եւ ֆինանսական ոլորտներում կազմեցին ավելի քան \$7 մլրդ: Աղբբեջանի նախագահ Ի.Ալիևը, ինչպես նշում են մի շարք հետազոտողներ, քանիցս բարձրաձայն հիացմունք է հայտնել Ն.Նազարբաևեի արտաքին էներգետիկ քաղաքականության արդյունավետության առիթով, ինչը, հավանաբար, Բաքվի էներգետիկ քաղաքականության վերիմաստավորման պատճառներից մեկն է հանդիսանում: Կրկնօրինակելով Աստանայի քաղաքականությունը՝ Բաքուն վերջին տարվա ընթացքում իրականացրել է մի շարք կարեւոր էներգետիկ էքսպանսիայի քայլեր Վրաստանում, Թուրքիայում, Ռուսաստանում, Ռումինիայում:

Վրաստանը՝ էներգետիկ ներդրումների հիմնական դաշտ

2006-ին վրացական Փոթի նավահանգստից ոչ հեռու գտնվող Կուլեւի նավթային տերմինալի գնումով սկսվեց Վրաստանում ԱՊՆԸ խոշոր ներդրումային ծրագրերի իրականացումը: Վրաստանի էներգետիկ շուկայում ադրբեջանական էներգետիկ ներդրումների խթանման նպատակով 2006թ. ԱՊՆ-ն ստեղծեց հատուկ ընկերություն՝ «SOCAR Energy Georgia»: Ընկերության ղեկավար Մ.Մամեդովը օգոստոսին հայտարարեց, որ ադրբեջանական կողմը առաջիկա երկու տարվա ընթացքում պատրաստվում է Վրաստանի տարածքում, Կուլեւիից ոչ հեռու, կառուցել 3 խոշոր նավթաբազա եւ մինչեւ 10 մլն տոննա հզորությամբ նավթավերամշակման գործարան: Նշենք, որ այս ծրագրերի իրականացման համար «SOCAR Energy Georgia» ընկերությունը 2007-ի սեպտեմբերին պաշտոնապես դիմել է Վրաստանի իշխանություններին իրեն Կուլեւիի շրջանում 200 հեկտար տարածք տրամադրելու հարցով: Միեւնույն ժամանակ, ընկերությունը 2008-ին ծրագրում է Վրաստանում ստեղծել 25 խոշոր ժամանակակից բենզալցակայաններ, որտեղ վաճառվելու են միայն ադրբեջանական նավթային ապրանքներ: Հարկ է նշել, որ բենզալցակայանների մեծ մասը կառուցվելու է Վրաստանի ադրբեջանաբնակ տարածքներում, ինչը բավական լուրջ ազդակ կհանդիսանա այս տարածքների՝ Ադրբեջանի հետ տնտեսական ինտեգրման խթանման համար: Ուշադրության է արժանի նաեւ այն, որ «SOCAR Energy Georgia»-ի ղեկավարների մեծ մասը թեւեւ Վրաստանի քաղաքացիներ են, սակայն ազգությամբ ադրբեջանցիներ են:

2007-ին Վրաստանի գազատարների զարգացման ծրագրերի հիմնական իրականացնողը դարձավ ԱՊՆԸ մեկ այլ դուստր ձեռնարկություն՝ «Նեֆտեգազտրոյ» հատուկ տրեստը: Այս ընկերությունը նոյեմբերին ավարտեց Վրաստանի ադրբեջանաբնակ Գարդաբանի քաղաքից Նավթլուղ (Թբիլիսիի մոտ) 34,5 կմ-անոց գազատարի կառուցումը, ինչպես նաեւ՝ Թբիլիսիից Ռուսթավի գազատարի հիմնանորոգման աշխատանքները: Վերոնշյալ նախագծերն իրականացվել են Բաքու-Թբիլիսի-էրզրում ծրագրից անկախ եւ զուտ վրաց-ադրբեջանական պայմանավորվածությունների արդյունք են:

Վրաստանում այս տարվա ընթացքում ԱՊՆԸ-ի կողմից իրականացվող ամենամեծ էներգետիկ նախագիծը մասնակցությունն է 24 շրջանային գազաբաշխիչ ընկերությունների սեփականաշնորհմանը:

Ըստ պաշտոնական թբիլիսիի՝ շրջանային գազաբաշխիչ ցանցերի սեփականաշնորհումը պայմանավորված է ոչ միայն տնտեսության հետագա ազատականացման խրախուսմամբ, այլ նաև նպատակ ունի խթանել օտարերկրյա ներդրումները Վրաստանի գազի շուկայում, որի պետական ենթակառուցվածքները բավական խարխուլ վիճակում են:

Իրականում Վրաստանն անկարող է սեփական միջոցներով ապահովել երկրի բնակավայրերի գազաֆիկացումը, քանի որ խորհրդային ժամանակներից ժառանգված ենթակառուցված անկախության առաջին տարիներին քայքայվել է թալանվել է: Ուստի, փորձ է արվում երկրի գազաֆիկացման ծրագրի իրականացումը հանձնել մասնավոր ընկերություններին: Նշենք, որ ԱՊՆԸ-ից բացի, սեփականաշնորհմանը մասնակցելու հայտ են ներկայացրել միայն երկու վրացական ընկերություններ՝ «Wissol»-ը և «Իվերի-7»-ը, որոնք, սակայն, հավակնում են երկրի կենտրոնական շրջանների և Կախեթի գազաբաշխիչ երեք ընկերությունների սեփականաշնորհմանը: Ադրբեջանա-վրացական սահմանից, Վրաստանի հարավով, մինչև Բաթում և Փոթի ընկած տարածքների (բացառությամբ Ջավախքի) գազաբաշխիչ ցանցերի սեփականաշնորհման միակ հայտը ներկայացրել է ԱՊՆԸ-ն, որը շուտով կդառնա համակարգի հիմնական սեփականատերը: Նշենք, որ ըստ այս ծրագրի՝ ԱՊՆԸ վերահսկողության տակ կանցնեն Մառնեուլի, Բաթումի և Փոթիի գազամատակարարման համակարգերը:

Ըստ վստահելի աղբյուրների՝ 2008թ. ԱՊՆԸ-ն մտադրություն ունի ակտիվ գործընթաց սկսել գազատար մայրուղիների սեփականաշնորհման ծրագիր մշակելու գործում թբիլիսիին խրախուսելու ուղղությամբ: Սա վերաբերում է նաև Վրաստանի տարածքով Ռուսաստանից Հայաստան եկող գազատարին: Ակնհայտ է, սակայն, որ Վրաստանի ղեկավարությունն այս նախագծին չի կարող դրական վերաբերվել, քանի որ դրա իրագործումը կարող է վնասել Երեւանի հետ հարաբերություններին:

Բաքու – Նովոռոսիյսկ նավթատարի «ադրբեջանական» ապագան

Բաքու–Ջեյհան նավթատարի շահագործումից հետո զգալիորեն կրճատվեց Բաքու–Նովոռոսիյսկ նավթատարով ադրբեջանական նավթի արտահանման ծավալը: Այս տարվա կտրվածքով՝ նավթատարով

արտահանված նավթի ծավալը, ըստ ռուսական «Տրանսնեֆտ» ընկերության, չի գերազանցի 1,5 մլն տոննան:

Միեւնույն ժամանակ, հարկ է նշել, որ սույն թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվում է ռուսական «Տրանսնեֆտի» հետ ԱՊՆԸ պայմանագիրը Բաքու-Նովոռոսիյսկ նավթատարով նավթի արտահանման վերաբերյալ: Այս կապակցությամբ ադրբեջանական կողմը սկսել է ակտիվ մի գործընթաց՝ ուղղված Բաքու-Նովոռոսիյսկ խողովակաշարի կառավարման ստանձնմանը: Ռուսական կողմն առաջարկել է խողովակաշարի շահագործումը հանձնել Ադրբեջանին, քանի որ վերջինիս նավթն է արտահանվում այս ճանապարհով: BP-Azerbaijan ընկերության փոխնախագահ Ռ.Ջավանշիրի հայտարարության համաձայն՝ նախատեսվում է հարցը լուծել մինչեւ դեկտեմբերի վերջը: Եթե «Տրանսնեֆտը» նավթատարի շահագործման ղեկավարումը հանձնի ադրբեջանական կողմին, հնարավոր է, որ Ադրբեջանը գալիք տարի ավելացնի խողովակաշարով նավթի արտահանման ծավալները: Միեւնույն ժամանակ, հարկ է հիշել, որ Մոսկվան շատ խանդոտ է վերաբերվում «Տրանսնեֆտի» մենաշնորհային կարգավիճակին, ինչը կարող է խանգարել Բաքվին՝ ստանձնել նավթատարի կառավարումը: Բացառված չէ, որ Բաքուն ուղղակի առիթ է փնտրում նավթի արտահանման ռուսական մայրուղուց հրաժարվելու համար եւ այդ պատճառով է պնդում իրեն հանձնել Բաքու-Նովոռոսիյսկի կառավարումը: Չնայած սրան, վերլուծական նյութերը լի են տեղեկատվությամբ, թե ռուսական կողմը պատրաստ է զիջումների գնալ Ադրբեջանին, մանավանդ եթե ղազախական ընկերությունները պատրաստակամություն հայտնեն Բաքվում իրենց նավթով «լցնել» նավթամուղը:

Հարկ է նշել, որ ռուսական կողմի որոշումը մեծապես կախված է նաեւ նրանից, թե ինչ տեմպով կիրականանա Բուրգաս-Ալեքսանդրոպոլիս նավթատարի կառուցումը, որը ենթադրում է ռուսական Նովոռոսիյսկի վերածումը սեւծովյան ափի կարելորագույն նավթատրանսպորտային հանգույցի:

Չեւտելություններ

Ադրբեջանի էներգետիկ ներդրումները տարածաշրջանում նպատակ ունեն ադրբեջանական ազդեցության ապահովումն այն շրջաններում, որոնք կարելոր դեր են խաղում Բաքվի էներգետիկ քաղաքականության

մեջ: Միեւնույն ժամանակ, արտաքին էներգետիկ նախագծերի իրականացումն ապահովում է նավթային փողերի օրինական վերաբաշխումը ադրբեջանական քաղաքական եւ տնտեսական էլիտայի շրջանակում:

Սակայն հարկ է նշել, որ Վրաստանում Ադրբեջանի էներգետիկ ներդրումները հետապնդում են նաեւ մի շարք հեռանկարային քաղաքական նպատակներ, որոնցից ամենակարեւորներն են`

ա. Վրաստանի ադրբեջանաբնակ տարածքներում Բաքվի ազդեցության տարածումը,

բ. Վրաստանի սեւծովյան նավահանգիստ-քաղաքներում ադրբեջանական ազդեցության ապահովումը,

գ. Հարավային Կովկասի էներգետիկ հոսքերի վրա առավելագույն ազդեցության հաստատումը:

ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ Փագիկ Տեր-Չարությունյան

Աշխարհաքաղաքական զարգացումների տեսակետից՝ ավարտվող 2007-ը ուրույն տարի էր: Բազմաբեւեռ համակարգի ձեւավորման վերաբերյալ վերլուծաբանական հանրությունում նախկինում ընթացող քննարկումները տեսական հարթությունից տեղափոխվեցին իրական քաղաքականություն: Կարելի է ամրագրել, որ միաբեւեռից բազմաբեւեռի վերափոխվելու անցումային փուլն ավելի կարճատեւ եղավ, քան կանխատեսվում էր: Միեւնույն ժամանակ, սկսեցին ի հայտ գալ մի շարք միտումներ, որոնք, զուցեւ առայժմ անուղղակիորեն, վկայում են այն մասին, որ գծագրվող բազմաբեւեռ աշխարհի քաղաքական ձեւաչափերը կարող են տարբերվել նախկինում ակնհայտ թվացող պատկերացումներից:

Բազմաբեւեռ աշխարհի ձեւավորման հիմնական հայտանիշը Միացյալ Նահանգների նահանջն է իր գլոբալ մենատիրական դիրքերից: Այդ գործընթացը պայմանավորված է ինչպես աշխարհաքաղաքական այլ դերակատարների հզորացմամբ, այնպես էլ ԱՄՆ-ի եւ նրա մերձավոր դաշնակիցների (որոնց շարքում առաջնահերթ դիրքեր ունեն Մեծ Բրիտանիան եւ Իսրայելը) գաղափարախոսական, քաղաքական եւ տնտեսական համակարգի մասնակի վերասերմամբ: Այսօր այդ երեւույթները տեսանելի են արդեն շատերին, եւ այս համատեքստում, թերեւս, ամենաուշագրավը պետք է համարել Իրանի հանդեպ ԱՄՆ ռազմավարության վերանայումը եւ վերիմաստավորումը: Նման մոտեցման նախանշանները 2007-ին բավական շատ էին. կարելի է հիշատակել միայն ԱՄՆ-Իրան բանակցությունները Բաղդադում: Սակայն որպես պաշտոնական հայեցակարգ այն ազդարարվեց ամերիկյան հետախուզական հանրության ամենահեղինակավոր վերլուծական կառույցի՝ Ազգային հետախուզության խորհրդի (National Intelligence Council – NIC) հրապարակումով այն մասին, թե Իրանը դադարեցրել է միջուկային զենք մշակելու իր ծրագրերը դեռեւս 2003-ին եւ մոտ ապագայում չի նախատեսում նման զենք ստեղծել: Սա, անշուշտ, հստակ քաղաքական պատվերի արտահայտություն է: Բավական է հիշել

2001–2003թթ. Միացյալ Նահանգների հատուկ ծառայությունների զեկույցները շրջափակումներից եւ պատժամիջոցներից հյուժված Իրաքում զանգվածային ոչնչացման զենքի առկայության վերաբերյալ, որոնք ԱՄՆ-ի համար ռազմական ներխուժում կազմակերպելու հիմք հանդիսացան: Ակնհայտ է, որ NIC-ի հրապարակած տվյալներն այսօր հիմք են հանդիսանում Իրանի դեմ ռազմական գործողություններ ծավալելու հայտնի մտադրությունից, զոնե տեսանելի ապագայում, հրաժարվելու համար:

Ավելորդ չէ հիշել, որ Իրանի հետ հարաբերություններն ամերիկյան ռազմավարության անկյունաքարերից մեկն են, քանի որ վերջին մոտ երեսուն տարիներին այդ երկրի եւ ԱՄՆ հակասությունները ներառում են գաղափարախոսական, քաղաքական ու տնտեսական հարաբերությունների ողջ ոլորտը: Վերջին տարիներին վերլուծաբանական հանրության մի ստվար մասը գրեթե չէր կասկածում, որ ԱՄՆ–Իրան ռազմական հակամարտությունն անխուսափելի է. հիմնական տարածայնությունները վերաբերում էին այդ հակամարտության ծավալման ժամկետներին եւ հնարավոր սցենարներին: Դատելով զանգվածային լրատվամիջոցներում հայտնված տարաբնույթ արտահոսքերից՝ կարելի է ենթադրել, որ Իրանի հանդեպ ամերիկյան ռազմավարության վերիմաստավորումը բավական դժվար է տրվել ԱՄՆ ներկայիս վարչակազմին: Այն զգալի չափով արտահայտում է 2008թ. նախագահական ընտրությունների արդյունքում սպասվող փոփոխությունները եւ դրա հետ փոխկապակցված իսրայելական լոբբինգը: Տպավորությունն այնպիսին է, որ քաղաքական եւ տնտեսական ոլորտներում Միացյալ Նահանգների հետ սերտաճած Իսրայելն այսօր իր համար անհեռանկարային եւ վտանգավոր է գնահատում հնարավոր ուժային զարգացումները տարածաշրջանում: Եվ դրա վկայություններից է իսրայելցիների՝ նախկինի համեմատ առավել խաղաղասիրական դիրքորոշումը, որն արտահայտվել է վերջերս Անապոլիսում (ԱՄՆ) կայացած իսրայելապաղեստինյան համաժողովում: Նշենք նաեւ, որ ԱՄՆ քաղաքական նահանջն ընդհանրապես նրա դաշնակիցներին թելադրում է գործել ավելի ինքնուրույն, ինչն առավելագույնս արտահայտվում է Թուրքիայի եւ Իսրայելի դիրքորոշումներում:

Բոլոր դեպքերում մեկ անգամ եւս պետք է փաստել, որ NIC-ի հանրային հնչեղություն ստացած զեկույցը տրամաբանորեն ամրագրեց այն իրողությունը, որ ԱՄՆ գլոբալ քաղաքականությունը թեւակոխում է

մի նոր փուլ, որտեղ հիմնական շեշտադրումները կատարվելու են ոչ թե ռազմական, այլ այսպես կոչված «փափուկ ուժի» վրա: Միեւնույն ժամանակ, ակնհայտ է, որ Միացյալ Նահանգները, հրաժարվելով գլոբալ մենատիրությունից, համաձայն միջնադարյան հայտնի բանաձևի՝ շարունակում է մնալ «առաջինը հավասարների մեջ»: Տիրապետելով հսկայական մտավոր և նյութական ռեսուրսների՝ ԱՄՆ-ը մնում է առայժմ միակ տերությունը, որն ի զորու է նախագծել բազմաբեւեռ աշխարհի այն կառուցվածքը, ինչն առավելագույնս համապատասխանում է այդ տերության քաղաքական ընտրանու կողմից ձեւավորված ազգային շահերի վերաբերյալ պատկերացումների: Այս առումով Իրանի հետ ընդհանուր եզրեր գտնելու մոտեցումը, չի բացառվում, կարող է հետապնդել հետեւյալ ռազմավարական ծրագիրը:

Ինչպես հայտնի է, աշխարհաքաղաքական իրողությունները բավական մնայուն երեւույթ են, և դրանց հետ կապված նախագծերը երկար կյանք ունեն: Այսօր, ինչպես և, մասնավորապես, կես դար առաջ, անգլոսաքսոնյան գերակայության ամենագլխավոր մրցակիցները, հայտնի ձեւափոխումներից հետո, շարունակում են մնալ Ռուսաստանը և Չինաստանը: Այդ առումով, թերեւս, տեղին է հիշել 1955թ. ձեւավորված ՍԵՆՏՕ-ն (ռազմաքաղաքական դաշինքն առավել հայտնի է «Բաղդադյան պակտ» անվամբ), որում Մեծ Բրիտանիայի հովանու տակ ընդգրկված էին Թուրքիան, Իրանը, Իրաքը և Պակիստանը: Հետագայում այդ դաշինքի ռազմական կոմիտեում ընդգրկվեց նաեւ Բրիտանական կայսրության իրավահաջորդը՝ Միացյալ Նահանգները: Առաջին սառը պատերազմի տարիներին ՍԵՆՏՕ-ի նպատակն էր արգելափակել հարավից «սովետների» հնարավոր էքսպանսիան: Այսօր, անշուշտ, իրողություններն այլ են, սակայն քաղաքական տրամաբանությունը, որոշակի էվոլյուցիաներից հետո, շարունակում է մնալ նույնը: Այդ համատեքստում ԱՄՆ-Իրան, ինչ-որ առումով՝ ԱՄՆ-Թուրքիա հակասությունները մեղմելու ամերիկյան միտումները գուցե և ուղղված են մի նոր տիպի (թերեւս, առանց հավակնոտ և պարտավորեցնող անվանման) ՍԵՆՏՕ-ի ստեղծմանը: Նման առանցքը, որտեղ, իհարկե, ներգրավված կլինի նաեւ Աֆղանստանը, զգալիորեն կհակազդի հզորացող Ռուսաստանի և Չինաստանի ազդեցությանը և կապահովի անգլոսաքսոնյան արժանավայել ներկայությունը բազմաբեւեռ աշխարհում: Չի կարելի նաեւ բացառել, որ այդ առանցքը կձեւավորվի որպես Իսլամական աշխարհի որոշակի ուժի կենտրոն նոր աշխարհակարգում:

Վերոնշյալ զարգացումների հնարավորության մասին անուղղակիորեն վկայում են Չինաստանի (որի արտաքին քաղաքականության հայեցակարգված եւ համակարգված դրվածքն այսօր չի զիջում ամերիկյանին) ռազմավարությունում ի հայտ եկած նոր միտումները: Լրատվամիջոցների համաձայն՝ այդ տերությունը «նշաններ է ցույց տալիս», որ կարող է եւ դեմ չլինել Իրանի միջուկային ծրագրի կապակցությամբ ՄԱԿ-ի կողմից հնարավոր պատժամիջոցների կիրառմանը: Նման մոտեցման լրացուցիչ վկայությունն է այն, որ Իրանին վարկեր տրամադրելու գործում Չինաստանը սկսել է բարդություններ ստեղծել: Այսինքն՝ այդ նոր գերտերությունը որոշակի վտանգներ է զգում հզորացող եւ ԱՄՆ-ի հետ համագործակցության հնարավորություններ ունեցող Իրանից:

Թերեւս, նույն տրամաբանության մեջ պիտի դիտարկել նաեւ Իրանի հանդեպ Ռուսաստանի երկիմաստ պահվածքը:

ՆՈՐ ԻՐԱՎԻՃԱԿ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ. NIC-ի զեկույցը Իրանի մասին Սարգիս Հարությունյան

2007թ. դեկտեմբերի 3-ին Միացյալ Նահանգների Ազգային հետախուզական խորհուրդը (ԱՅԽ, NIC) հրապարակեց Իրանի միջուկային ծրագրին առնչվող իր զեկույցը, ուր որպես գլխավոր հետետևություն նշված է, թե, ամենայն հավանականությամբ, Իրանը դադարեցրել է իր միջուկային զենքի ծրագիրը 2003թ. աշնանը¹: Անշուշտ, ամերիկյան հետախուզական 16 գործակալությունների կողմից պատրաստված նման հետետևությամբ զեկույցի հրապարակումը ռազմավարական կարգի ակցիա է, որի հետ կապված որոշումը կարող է կայացվել միայն Սպիտակ տանը: Ձեկույցի հրապարակման փաստն արդեն իսկ հուշում է, որ առկա են ամերիկա-իրանական բավական լուրջ պայմանավորվածություններ, որոնք պլանավորման փուլից մուտք են գործել իրականացման փուլ: Այս առումով, հարկ ենք համարում կենտրոնանալ հատկապես հետեւյալ կետերի վրա.

❖ Իրանի միջուկային ծրագրի գծով Բուշ-կրտսերի վարչակազմի մոտեցումը ոչ միայն եղել է Թեհրանի նկատմամբ գործադրվող ամերիկյան ճնշման գլխավոր լծակ, այլև 2003թ. իրաքյան կամպանիայից հետո հանդիսացել է ԱՄՆ մերձավորարեւելյան քաղաքականության հիմնական բաղկացուցիչը, հետեւաբար՝ փոփոխությունն այդ կետում ենթադրում է, որ ամերիկա-իրանական պայմանավորվածությունները չեն կարող լինել սոսկ իրավիճակային ու կարող են վերաբերել առնվազն միջնաժամկետ հեռանկարին,

❖ այսօր ամերիկա-իրանական հարաբերությունները հանդիսանում են ոչ միայն մերձավորարեւելյան, այլև գլոբալ քաղաքականության կարեւորագույն գործոններից մեկը, այսինքն՝ փոփոխություններն այդ հարաբերություններում իրենց ազդեցությունն են թողնելու ոչ միայն տարածաշրջանային, այլև միջազգային ձեւաչափերում:

¹ Փաստաթղթում (NIC, Iran: Nuclear Intentions and Capabilities) օգտագործված է հետեւյալ ձեւակերպումը. «Մենք բարձր վստահությամբ (high confidence) գնահատում ենք, որ 2003թ. աշնանը Թեհրանը դադարեցրել է իր միջուկային զենքերի ծրագիրը, ինչպես նաեւ միջինից բարձր վստահությամբ գնահատում ենք, որ Թեհրանը առնվազն բաց է պահել միջուկային զենք մշակելու իր հնարավորությունը»:

Ցուցիչները

Իհարկե, ամերիկա-իրանական հարաբերություններում տեղի ունեցող լուրջ փոփոխությունների հիմնական վկայությունը ԱՄՆ ԱՅԽ վերոհիշյալ զեկույցի հրապարակումն էր, սակայն գոյություն ունեն եւս մի քանի ցուցիչներ, որոնք ոչ միայն խոսում են Վաշինգտոն-Թեհրան գծում ընթացող փոփոխությունների մասին, այլեւ ի ցույց են դնում այն կետերը, որոնց շուրջ, ըստ ամենայնի, առկա են կողմերի պայմանավորվածությունները:

2007թ. նոյեմբերի 27-ին ամերիկյան Անապոլիս քաղաքում կայացած մերձավորարեւելյան համաժողովի առնչությամբ ուշադրության կենտրոնում հայտնված դրվագներից մեկը Սիրիայի մասնակցությունն էր: Չնայած 2007թ. սկզբից նկատվող ամերիկա-սիրիական որոշակի ջերմացմանը (2007թ. ապրիլին ԱՄՆ Ներկայացուցիչների տան խոսնակ Նենսի Փելոսիի անմախադեպ այցը Դամասկոս), պաշտոնական Դամասկոսը շարունակում է հանդիսանալ Իրանի գլխավոր դաշնակիցը Մերձավոր Արեւելքում, որոնց համատեղ քաղաքականությունները հատկապես ակնառու են լիբանանյան ու պաղեստինյան ուղղություններում:

Անապոլիսի համաժողովում ոչ այնքան կարեւոր էր այդ պահի դրությամբ իսրայելցիների ու պաղեստինցիների միջեւ ամրագրված փոխհամաձայնության աստիճանը, որքան ամերիկյան դիվանագիտության նախաձեռնությամբ մեկնարկած «խաղաղության հաստատման» գործընթացը: Վաշինգտոնի տեսանկյունից խիստ կարեւոր է Դամասկոսի ներկայությունն այդ գործընթացում, սակայն կարեւորն այստեղ այն է, որ Սիրիայի ներգրավվածությունը պետք է ընկալել ոչ այնքան արեւմտյան ճնշման հետեւանք, որքան փոխադարձաբար ընդունելի պայմանավորվածության արդյունք: Էլ ավելի կարեւոր է հասկանալ այն հանգամանքը, որ պաշտոնական Դամասկոսը դժվար թե գնար նման քայլի առանց իրանական աջակցության, քանի որ քիչ հավանական է, որ առկա իրավիճակում, պայմանավորվածությունների կատարման իմաստով, միայն սիրիական կարողությունները լուրջ երաշխիք թվային Դամասկոսին:

Երկրորդ կարեւոր ցուցիչը Լիբանանում ընթացող ներքաղաքական զարգացումներն են: Ինչպես հայտնի է, նոյեմբերի 23-ի լույս 24-ի կեսգիշերից Լիբանանը մնաց առանց նախագահի. սպառվեց նախագահ Էմիլ Լահուդի պաշտոնավարման ժամկետը, իսկ խորհրդարանում ներկայացված քաղաքական ուժերը՝ վարչապետ Ֆուադ աւ-Սինյորային սատարող արեւմտամետ մեծամասնությունը եւ Իրանին ու Սիրիային հարող ընդդիմությունը (առաջին հերթին «Յիզբալահ» շարժումը),

ամիսներ շարունակ այդպես էլ չէին կարողանում փոխհամաձայնության գալ միասնական թեկնածուի շուրջ:

Լիբանանյան ներքաղաքական կյանքն ուշագրավ է, քանի որ այն մի մեծ մասով ի ցույց է դնում տարածաշրջանում տեղի ունեցած իրավիճակային ցանկացած լուրջ փոփոխություն: Այդ իմաստով, երբ նոյեմբերի վերջին–դեկտեմբերի սկզբին ոչ միայն հայտնի դարձավ Լիբանանի նախագահի պաշտոնում այդ երկրի քաղաքական հիմնական ուժերի փոխհամաձայնեցված թեկնածուի անունը եւ այդ ուժերը ձեռնամուխ եղան Լիբանանի սահմանադրության փոփոխությանը, որպեսզի բանակի Գլխավոր սպայակույտի պետ, գեներալ Միշել Սուլեյմանը կարողանա ընտրվել երկրի ղեկավար, արդեն իսկ կարելի էր խոսել իրանա-ամերիկյան նոր պայմանավորվածության մասին: Եթե հայտնի են Ֆուադ ա-Սինյորայի կառավարությանը սատարող երկրները՝ ԱՄՆ, Ֆրանսիա, Սաուդյան Արաբիա, ապա էլ ավելի հայտնի են «Հիզբալահի» թիկունքին կանգնած պետությունները՝ Իրան, Սիրիա:

Կախված այն հանգամանքից, թե ինչ ընթացք կստանա Սուլեյմանի ընտրության հարցը, կարելի է ավարտական կարծիք կազմել նաեւ Լիբանանի գծով ամերիկա-իրանական պայմանավորվածությունների մասին:

Հաջորդ կարելուր ցուցիչը եղավ ընթացող արաբա-իրանական ջերմացումը: Դեկտեմբերի 3-ին Կատարի մայրաքաղաք Դոհայում բացված Պարսից ծոցի համագործակցության խորհրդի² (Gulf Cooperation Council) գազաթափողովին հրավիրված էր Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինե-ժադը: Ուշագրավն այստեղ ոչ այնքան կոնկրետ գազաթափողովին իրանական ղեկավարի մասնակցությունն էր, որքան այն, որ ի տարբերություն նախկինում տարբեր հարցերի հետ կապված երբեմն-երբեմն սրվող Իրան–Ծոցի արաբական երկրներ հակասությունների՝ ներկայումս նույն այդ ձեւաչափում բավական ընդգրկուն օրակարգով ընթանում է փոխգործակցության խորացում: Օրինակ, 2007թ. նոյեմբերին Սաուդյան Արաբիան Իրանին պաշտոնապես առաջարկեց հիմնել ուրանի հարստացման համատեղ կենտրոն, որը կապահովի ինչպես Թեհրանի, այնպես էլ Ծոցի անդամ արաբական երկրների կարիքները: Իսկ իսրայելական աղբյուրներն ուղղակի գրում են, թե ներկայիս ամերիկա-իրանական պայմանավորվածությունների միջնորդը եղել է հենց Սաուդյան Արաբիան:

Իրանա-արաբական ձեւաչափում ընթացող ջերմացման մասին է խոսում նաեւ ս.թ. դեկտեմբերի 10-ին հայտնի դարձած Եգիպտոսի որոշումը 27 տարվա ընդմիջումից հետո վերականգնել դիվանագիտական

² Հիմնադրվել է 1981թ.: Անդամ պետություններն են Սաուդյան Արաբիան, Զուվեյթը, Կատարը, Բահրեյնը, Արաբական Միացյալ Էմիրությունները եւ Օմանը:

կապերը թեհրանի հետ, որոնք ընդհատվել էին Իրանի իսլամական հեղափոխությունից հետո:

Եվ վերջապես, որպես ամերիկա-իրանական հարաբերություններում ընթացող փոփոխությունների լուրջ ցուցիչ պետք է համարել ս.թ. նոյեմբերի 26-ին Վաշինգտոնում Բուշ-կրտսերի ու Իրաքի վարչապետ Նուրի ալ-Մալիքիի միջև կնքված ԱՄՆ-Իրաք երկարատև համագործակցության մասին հռչակագիրը:

Հռչակագիրը ոչ այնքան կարեւոր է այն պատճառով, որ 2008թ. ավարտից հետո պետք է օրինականացնի ամերիկյան զորքերի ներկայությունն Իրաքում, երբ ավարտվի ՄԱԿ-ի համապատասխան մանդատի ժամկետը, այլ որովհետև կնքված ամերիկա-իրաքյան ռազմաքաղաքական պակտը (որն արեւմտյան աղբյուրների ներկայացմամբ, հնարավորություն կտա Վաշինգտոնին արդեն մշտական հիմունքներով ռազմակայաններ պահել Իրաքում³), վկայում է ԱՄՆ մերձավորարեւելյան քաղաքականության փոփոխության մասին:

Ամերիկա-իրանական հարաբերություններում ընթացող փոփոխությունների իմաստով ուշագրավ է այն հանգամանքը, որ Վաշինգտոնի համար լուրջ բարդություններ կներկայացնեն Բաղդադի հետ նման պայմանավորվածության ձեռքբերումը եւ առավել եւս՝ նրա իրականացումն առանց թեհրանի համաձայնության: Նշված մոտեցումը հատկապես հիմնավորված է դառնում, եթե այն դիտարկում ենք Իրաքի շիաների տեսանկյունից՝ ներկայումս առանց իրանական հավանության Բաղդադի կառավարության ոչ մի շիա քաղաքական ուժ ԱՄՆ-ի հետ չէր գնա նման պայմանավորվածության:

Չեղարկություններ

Պետք է հատուկ ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ ամերիկա-իրանական պայմանավորվածությունների օրակարգն ընդգրկում է Վաշինգտոնի ու թեհրանի միջև եղած հիմնական երկու հակասությունները՝

❖ ԱՄՆ-ը հայտարարեց, թե Իրանի միջուկային ծրագիրը ներկայում

³ Իսրայելական աղբյուրները գրում են, թե այդ ռազմակայանների թիվը լինելու է 12: Դրանք տեղակայվելու են բնակավայրերից դուրս՝ լավ պաշտպանական ենթակառուցվածքով: Այդ ռազմակայաններում առկա զորքերի թիվը կազմելու է մոտ 50 հազ. մարդ, իսկ իրաքյան բնակավայրերում առօրյա անվտանգությունը պետք է ապահովեն տեղական ուժերը:

չունի ռազմական բնույթ, հետեւաբար՝ վերանուն է իսլամական հանրապետության նկատմամբ ռազմական ակցիայի հիմնավորումը,

❖ ամերիկա-իրաքյան ռազմաքաղաքական պայմանագիրը ցույց է տալիս, որ Վաշինգտոնն ու Թեհրանը առնվազն սկզբունքային փոխհամաձայնության են հանգել նաեւ Իրաքի հարցում:

Վերոհիշյալն, անշուշտ, բավարար հիմք է ենթադրելու, թե առաջիկայում փոփոխություններ ենք նկատելու նաեւ միջազգային քաղաքականության այլ կարեւոր ձեւաչափերում: Սակայն գլխավոր հետեւությունը պետք է լինի այն, որ իրանական հարցում ամերիկյան նախաձեռնությամբ ի հայտ եկած տեղաշարժը վկայում է, թե ԱՄՆ-ի համար առաջացել են (կամ առաջանում են) կարեւոր ուղղություններ, որոնց առնչությամբ նա պետք է գործի:

Հնարավոր է, որ, օրինակ, ռուս-ամերիկյան հարաբերություններում շարունակվող սրացումն այդ ուղղություններից մեկն է, բայց ավելի վստահաբար կարելի է ասել, որ միջազգային քաղաքականությանը սպասվում է թարմացված օրակարգ:

ԿՈՍՈՎՈՅԻ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ Դավիթ Յովհաննիսյան

Մոտենում է բալկանյան հանգույցը քանդելու հերթական փորձի վերջին փուլը, որը կապված է դեռևս պաշտոնապես Սերբիայի կազմի մեջ մտնող Կոսովոյի անկախության հռչակման հետ: Այս խնդրի լուծմամբ կամբողջականանա հայտնի «Ազատության սահմաններ» ծրագրի բալկանյան մասը, որի շնորհիվ, համաձայն ծրագրի հեղինակների մտահղացման, ի վերջո կձեւավորվի միացյալ եվրոպան՝ հյուսիսատլանտյան անվտանգության համակարգի հենարանը:

Չարկ է նշել, սակայն, որ Կոսովոն միայն ֆորմալ կապ ունի Սերբիայի հետ, քանի որ այս նախկին հարավսլավական ինքնավարությունում արդեն վաղուց հաստատվել է ՄԱԿ-ի կառավարման համակարգը, իսկ անվտանգությունն ապահովում են միջազգային ուժերը: Կոսովոյի բնակչության 90 տոկոսը ալբանացիներ են, եւ միայն Սերբիային սահմանակցող 3 հյուսիսային շրջաններում բնակչության մեծամասնությունը կազմում են սերբերը: Ինքնավարության այս մասում գտնվող Միտրովիցա քաղաքը բաժանված է երկու մասերի՝ հյուսիսայինում ապրում են սերբերը, հարավայինում՝ ալբանացիները:

Կոսովոյի տարածքում կան եւս սերբերով բնակված մի քանի անկլավներ, որոնց ճակատագիրը, անկախ նրանից՝ կհռչակվի Կոսովոյի անկախությունը, թե ոչ, կարելի է որոշված համարել, քանի որ սերբ բնակչությունն այդ մասերից հեռանում է՝ վստահ չլինելով, որ իր անվտանգությունը կպաշտպանվի:

Կոսովոյի կարգավիճակի վերաբերյալ ձեւավորվել է երկու իրար հակասող մոտեցում, որոնցից առաջինը Սերբիայինն է, որը պահանջում է հարցին լուծում տալ միայն իր տարածքային ամբողջականության սկզբունքի պահպանման շրջանակներում, ինչում նրան սատարում է Ռուսաստանը, իսկ երկրորդը՝ Կոսովոյի ալբանացիներինը, որոնց ներկայիս փաստացի առաջնորդ եւ ընտրություններում հաղթած ժողովրդավարական կուսակցության ղեկավար Յաշիմ Տաչիմ պատրաստ էր արդեն 2007թ. հուլիսին հայտարարել Կոսովոյի անկախությունը, ինչը թե՛ այն ժամանակ, թե՛ ներկայումս աջակցություն է ստանում Միացյալ Նահանգների եւ եվրամիության կողմից:

Սույն թվի ղեկտեմբերի 10-ին միջազգային միջնորդական խումբը (որը

բաղկացած է Միացյալ Նահանգների, Ռուսաստանի Դաշնության եւ Եվրոպական միության ներկայացուցիչներից) հերթական անգամ զեկուցեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին այն մասին, որ Կոսովոյի կարգավիճակի վերաբերյալ բանակցություններն անհաջողությամբ պսակվեցին, քանի որ կողմերի դիրքորոշումները հնարավոր չեղավ մոտեցնել իրար:

Հարկ է նշել, որ Բելգրադը, ինչպես վկայում է Սերբիայի արտգործնախարար Վուկ Երեմիչը, պատրաստ է տալ Կոսովոյին «գերլայն ինքնավարություն»՝ ամեն ինչ, բացի միջազգային կազմակերպություններին անդամակցելուց, ինչը, սերբերի տեսակետից, հակասում է տարածքային ամբողջականության սկզբունքին: Ալբանացիներին իրավունք է վերապահվում ունենալ բոլոր պետական խորհրդանիշները՝ դրոշ, զինանշան, հիմն, Բելգրադի իշխանություններն իրավունք չեն ունենա միջամտելու Կոսովոյի ներքին գործերին եւ այլն:

Սակայն ալբանացիներն այս առաջարկներն անընդունելի են համարում: Նրանց նախագահ Ֆաթմիր Սեյդիուն հայտարարել է, թե «անկախությունը մեր ռազմավարության սկիզբն ու վերջն է»:

Եվրամիությունն, իր հերթին, շտապեցնում է կոսովյան ալբանացիների ղեկավարներին պատրաստել իրենց անկախ պետության սահմանադրության տեքստը՝ անկախություն հայտարարելուց անմիջապես հետո ընդունելու համար:

Այս դիրքորոշումն ամբողջովին համընկնում է Վաշինգտոնի մոտեցման հետ: Միացյալ Նահանգներն այս հարցում, անշուշտ, ընկալվում է որպես կոսովյան ալբանացիների հիմնական հովանավոր, իսկ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ջորջ Բուշ-կրտսերի նախագահությունը որակվում է իբրեւ ամերիկյան արտաքին քաղաքականության պարտությունների ժամանակաշրջան, ապա հասկանալի է, որ Կոսովոյի անկախության հարցում հանրապետական վարչակազմը ոչ միայն չի կարող ընդունել որեւէ փոխզիջումային տարբերակ, այլեւ շահագրգռված է հարցը լուծել մինչեւ 2008թ. նոյեմբերին կայանալիք նախագահական ընտրությունները:

Հաշվի առնելով այս ամենը՝ «Ազատություն» ռադիոկայանին տված իր հարցազրույցում Սերբիայի արտաքին գործերի նախարար Վուկ Երեմիչը, փաստորեն, հաստատեց, որ եթե կոսովցիներն անկախություն հայտարարեն, ապա սերբերի միակ հնարավորությունը կմնա փորձել կամ Կոսովոյից անջատել եւ Սերբիային միացնել սահմանամերձ սերբաբնակ երեք շրջանները, կամ էլ նրանց համար Կոսովոյի կազմում ինքնավարություն ստանալ:

Փաստորեն, ինչպես նշում են Կոսովոյում աշխատող ՄԱԿ-ի պաշ-

տոնյաները, անկախություն ստանալու խնդիրը լուծված է համարվում, եւ ներկայումս հարցը միայն այն է, թե տեխնիկապես ինչպես այն կիրականացվի՝ ՄԱԿ-ի որոշման հիման վրա՞, թե՞ տեղական իշխանությունների միակողմանի հռչակման միջոցով:

Սակայն կան մի շարք հարցեր, որ հուզում են շահագրգիռ կողմերին. ի՞նչ հետեւանքներ կունենա Կոսովոյի անկախության հռչակումը բալկանյան տարածաշրջանի համար, ի՞նչ թափ կստանան անխուսափելի թվացող բախումներն ալբանացիների եւ սերբերի միջեւ, ի՞նչը կզերահասի Սերբիան՝ արագացնել Եվրամիության կազմի մեջ մտնելու գործընթացը, թե՞ փորձել բոլոր միջոցներով վերականգնել իր տարածքային ամբողջականությունը:

Նշված հարցերի պատասխանները քիչ թե շատ հստակությամբ պարզ են: Բայց կա մի հարց, որի քննարկումներն աստիճանաբար ավելի ու ավելի նյարդային մթնոլորտ են ստեղծում Վաշինգտոնում, Մոսկվայում, Բրյուսելում, Թբիլիսիում, Սուխումում եւ մնացած բոլոր երկրներում, որտեղ վախ կան հույս կա, թե Կոսովոյի անկախություն ձեռք բերելու գործընթացը կարող է նախադեպ ճանաչվել:

Որքանով կարելի է դատել այս հիմնահարցի հետ կապված ռուսաստանյան պաշտոնյաների ծառայողական տեղաշարժերից եւ մամուլում հրապարակված պաշտոնական եւ կիսապաշտոնական գնահատականներից՝ Մոսկվայում այնպիսի մոտեցում է ձեւավորվել, թե ցանկացած լուծում բխում է Մոսկվայի շահերից: Եթե Կոսովոն շարունակի մնալ Սերբիայի կազմում, ապա դա կգնահատվի որպես Մոսկվայի դիվանագիտական ջանքերի արդյունք եւ նրա աճած ազդեցության հետեւանք: Հակառակ դեպքում Մոսկվան հնարավորություն է ստանում սպառնալ Հարավային Օսիայի եւ Աբխազիայի անկախության ճանաչմամբ բոլոր նրանց, ուն այդ հեռանկարը կարող է սարսափեցնել (նշենք, ի դեպ, որ կոսովցիներն ամերիկացիների խնդրանքով հետաձգել են անկախության հռչակումը մինչեւ 2008թ. փետրվար կամ մարտ ամիսները, որի պատճառը, ենթադրաբար, Վրաստանում կայանալիք նախագահական ընտրություններն են):

Մոսկվայի դիվանագիտական մարտավարությունը բխում է ՌԴ նախագահ Վ.Պուտինի արտահայտած դիրքորոշումից. «Մենք կընդունենք այն լուծումը, որին համաձայն լինեն եւ Բելգրադը, եւ Պրիշտինան»: Ինքնին հասկանալի է, որ տվյալ պայմաններում նման դիրքորոշումն ուղղված է հարցի լուծման հետաձգմանը, ինչը չի կարող բավարարել շահագրգիռ մյուս երկրներին:

Մյուս կողմից՝ ոչ ոք վստահ չէ, թե ինչ դիրքորոշում կզբաղեցնի

Ռուսաստանն այն դեպքում, եթե Կոսովոյի անկախության ճանաչման հարցը մտնի ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդ: Ռուսաստանը կարող է օգտագործել իր վետոյի իրավունքը, ինչը ոչինչ չի տա, քանի որ այդ դեպքում Միացյալ Նահանգներն ու Եվրամիության բոլոր պետությունները (բացի, թերեւս, Իսպանիայից, որի համար այս նախադեպը, հաշվի առնելով բասկերի վաղուց արդեն անկախանալու համար ներկայացրած հայտը, խիստ անցանկալի է) եւ նրանց արբանյակ երկրները մեկը մյուսի հետեւից կճանաչեն այն: Ռուսաստանը կարող է եւ ուղղակի չմասնակցել քվեարկությանը, ինչը նրանից սպասում են կոսովյան ալբանացիների հովանավորները, սակայն սա արդեն առանձին սակարկության առարկա է: Համենայնդեպս, այն փաստարկը, որ Ռուսաստանի համար Կոսովոյի անկախության ճանաչումը խիստ անցանկալի նախադեպ է, արդեն կորցրել է իր իմաստը, քանի որ Մոսկվան ներկայումս առիթ չունի անհանգստանալու իր կազմում գտնվող որեւէ ինքնավարության անկախության ձգտումների արտահայտություններից: Ընդհակառակը, այս նախադեպը լրացուցիչ լծակներ է տալիս Կրեմլին՝ Վրաստանի, Ադրբեյջանի եւ Հայաստանի հետ իր հարաբերություններում:

Այդ դեպքում ինչո՞ւ է Մոսկվան համառորեն պնդում բանակցությունների շարունակման վրա, այն բանակցությունների, որոնք, համաձայն հենց ռուս մասնագետների կարծիքի, ոչինչ չեն կարող տալ եւ իրական արդունք սպասելը դրանցից անիմաստ է:

Պատճառներից առաջինն այն է, որ Կրեմլում այս հարցի շուրջ երկար ժամանակ համաձայնություն չկար: Ռուսական քաղաքական գործիչների մի մասի համար այս հիմնահարցը ներկայանում էր որպես Բալկաններ վերադառնալու հնարավորություն, որը կարող է իրողություն դառնալ, եթե Ռուսաստանը, սատարելով իր դաշնակից Սերբիային, կարողանա կանխել Կոսովոյի անկախության հասնելուն ուղղված գործընթացը եւ պաշտպանել Սերբիայի տարածքային ամբողջականությունը, այսինքն՝ այն սկզբունքը, որն ընդամենը մի քանի տարի առաջ չափազանց էական նշանակություն ուներ Ռուսաստանի համար, քանի որ առկա էր Չեչնիայի խնդիրը: Սակայն մի քանի գործոնների ազդեցության տակ այս տեսակետի կողմնակիցների դիրքերը թուլացան: Լուծելով իր ինքնավարությունների հետ կապված խնդիրները՝ Մոսկվան այլեւս ազատ է տարածքային ամբողջականության սկզբունքի մեկնաբանություններում: Բացի այդ, Սերբիայում կան ազդեցիկ ուժեր, որոնց համար ամենից նախընտրելին Եվրամիության կազմի մեջ մտնելն է, այսինքն՝ նրանք առանձնապես շահագրգռված չեն Ռուսաստանին որպես իրենց միակ դաշնակից գնահատելու մեջ: Ավելին, նրանց շատ ձեռնտու կլինի, եթե

Մոսկվան ատամներով չպաշտպանի սերբերի շահերը: Այդ դեպքում նրանք երկու քաղաքային նոխազ կունենան. առաջինը՝ Յարավսլավիայի նախկին նախագահ Միլոշեվիչը, որի քաղաքականության պատճառով Կոսովոն հնարավորություն ստացավ անջատվելու Սերբիայից, իսկ երկրորդը՝ բալկանյան իր միակ դաշնակցին դավաճանած Ռուսաստանը:

Երկրորդ պատճառն այն է, թե Մոսկվայի շահերից բխում է, որ Միացյալ Նահանգները ճանաչի Կոսովոյի անկախությունը՝ խախտելով միջազգային իրավունքի նորմերը, ինչը տեղի կունենա, եթե հակառակ Ռուսաստանի վետոյի, այսինքն՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշման բացակայության պայմաններում, Վաշինգտոնը ճանաչի Կոսովոյի անկախությունը: Այս հանգամանքը Մոսկվային ազատ մանելու հնարավորություններ կտա իր կենսական շահերի գոտիներում: Մյուս կողմից՝ այս ամենը երկու պետությունների միջև ընթացող բանակցային գործընթացում սեղանի վրա եղած խնդիրների լուծման համար շատ թանկարժեք փաստարկ կարող է դառնալ. այլ խոսքերով՝ Մոսկվան, զիջելով այս հարցում, կարող է շահել իր համար շատ ավելի կարելոր խնդիրներում, որոնք կապված են ոչ միայն նախկին խորհրդային հանրապետություններում իր դիրքերի ամրապնդման, այլ նաև Ռուսաստանի ռազմական եւ էներգետիկ քաղաքականության հետ:

Սերբիան այս հարցում ունի մի քանի լծակներ, որոնք կարող է օգտագործել՝ ձգտելով կասեցնել կոսովյան ալբանացիների անկախացման գործընթացը: Առաջինն արդեն վերը նշվել է. սերբերը կարող են խրախուսել Կոսովոյում բնակվող սերբերին անջատվել եւ միանալ Սերբիային, ինչը, բնականաբար, կգուզորդվի նոր բախումներով, սակայն մեծ հավանականություն կա, որ հաջողությամբ կպսակվի:

Երկրորդ հնարավորությունը կապված է Բոսնիա եւ Հերցեգովինայի կազմում գտնվող Սերբական հանրապետության անկախացման գործընթացի խրախուսման հետ: Այս երկրորդ լծակի օգտագործումը սերբերին կարող է նոր խնդիրների առջև կանգնեցնել եւ հանգեցնել մեկուսացման, ինչին Սերբիայի բնակչությունը կտրականապես դեմ է: Սակայն այս հանգամանքն օգտագործելով՝ սերբական իշխանությունները հավանաբար կձգտեն արագացնել Եվրամիության կազմի մեջ իրենց երկրի ընդգրկվելու ընթացքը: Սա այն մրցանակն է, որը խոստացվել է սերբերին «լավ վարքի» համար:

Միացյալ Նահանգները Կոսովոյի անկախացմամբ ձեռք է բերում Բալկաններում իր ամենամիայնակ եւ վստահելի դաշնակցին: Այս իրավիճակը կարելի է համեմատել Իրաքի քրդերի դիրքորոշման հետ, որոնք այս երկրում հանդիսանում են Վաշինգտոնի գուցե միակ իրական

դաշնակիցները: Ամերիկացիներն արդեն իսկ ձեռք են բերել Կոսովոյում ռազմական օդանավակայան, մի քանի այլ ռազմավարական նշանակություն ունեցող օբյեկտներ, ինչը թույլ է տալիս նրանց իրականացնել եվրոպական քաղաքականության հետ ուղղակիորեն չկապակցված քայլեր:

Այն, որ Կոսովոյի անկախությունն ձեռք բերելու դեպքում շատ բան է փոխվելու մյուս հակամարտությունների հետ կապված մոտեցումներում՝ փաստ է, որքան էլ որ տարբեր արեւմտյան երիտասարդ դիվանագետներ հայտարարեն, թե Կոսովոյի դեպքն ունիկալ է: Իրականում ոչ մի ունիկալություն էլ չկա, տարբերվում են միայն հակամարտություններում ուղղակիորեն չընդգրկված ուժերի դասավորվածությունը եւ հարաբերակցությունը: Սա նշանակում է, որ կոսովյան նախադեպի ազդեցությունները կախված են լինելու այդքան չսիրված եւ փնովված Realpolitik-ից:

Իսկ մեր գործը, այսինքն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հետ կապված բանակցությունները, պետք է շարունակվեն նոր պայմաններում, այսինքն՝ հայկական երկու կողմերը պետք է ակտիվորեն օգտագործեն այս նոր հանգամանքը եւ պնդեն, որպեսզի մյուս շահագրգիռ կողմերը նույնպես հաշվի առնեն այն: ԼՂՀ-ն շատ ավելի լուրջ հիմքեր ունի միջազգայնորեն ճանաչվելու, քան Կոսովոն, քանի որ վաղուց արդեն անկախ եւ կայացած պետություն է:

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՆՏԵՐՎԵՆՑԻԱ

Վիկտոր Մյասնիկով

Նոյեմբերի 18-ին բրիտանական «Օբսերվեր» թերթում տպագրվեց Թոնի Բլերի վարչապետության ժամանակ նրա քարտուղարության ղեկավար Ջոնաթան Փաուելի ճառը՝ հնչած Բրիտանիայի «Portland Communications» խոշորագույն ինտերնետ-պրովայդերի կողմից կազմակերպված ընթրիքում: Մարդը, որը երկար տարիներ անմիջականորեն մասնակցել է պետության բոլոր արտաքին քաղաքական կարեւորագույն գործողություններին, ոչ քիչ չափով որոշել է Միացյալ Թագավորության միջազգային քաղաքականությունը, պնդում էր այսպես կոչված «ազատագրական ինտերվենցիայի» անհրաժեշտության մասին: Մեզ մոտ բռնապետությունների «ժողովրդավարացման» եւ ժողովուրդների «փրկության» այս ուժային մեթոդն առավել հայտնի է «մարդասիրական ինտերվենցիա» անվամբ: Կարելի է չկասկածել, որ Փաուելն արտահայտում էր ոչ միայն իր, այլեւ Թոնի Բլերի եւ, ընդհանրապես, Արեւմտյան աշխարհի առաջնորդների մեծամասնության մտքերը:

* * *

Իշխանության տասը տարիներին Թոնի Բլերի վարչակազմն անցկացրել է չորս պատերազմ: Բոլորն էլ, բնականաբար, նշվել են որպես մարդասիրական ինտերվենցիաներ: Առաջինը Սիրիա Լեոնեում էր: Այդ մասին Ջոնաթան Փաուելն այսպես է ասել. «Մեր ռազմական գործողությունն այդ երկրում հազիվ թե կարելի է հիմնավորել ինքնապաշտպանության փաստարկներով: Բայց քանի որ այն պսակվեց հաջողությամբ, ոչ ոք կասկածի չենթարկեց նրա տեսական արդարացումը»:

Չաջորդը եղավ Կոսովոն: Այն մասին, որ դա Չարավսլավիայի մաս է, նախկին բարձրաստիճան պետական պաշտոնյան եւ քաղաքական գործիչը նույնիսկ չհիշատակեց: Կարծես թե այն առանձին երկիր է: «Սակայն ռուսական վետոյի իրավունքի պատճառով մեզ այդպես էլ չհաջողվեց ստանալ ՄԱԿ-ի կողմից այդ պատերազմին աջակցությունը, – ասխոսում է Փաուելը: – Այնուամենայնիվ, Արեւմուտքում նորից ոչ ոք չառարկեց, քանզի այդ գործողությունը նույնպես հաջող էր»:

Ողջ համաշխարհային ընկերակցության կարծիքն Արեւմուտքին չի

հետաքրքրում: Նա ընդունում է միայն սեփական կարծիքը: Հիմնական հետեւությունն է. հաղթողներին չեն դատում: Սրան արժե ուշադրություն դարձնել:

«Պատերազմն Աֆղանստանում նույնպես ինքնապաշտպանության դեպք չէր, –խոստովանում է Բլերի քարտուղարության նախկին ղեկավարը:–Թալիբանին ներկայացվել էր հստակ վերջնագիր. հրաժարվեք Ալ-Կաիդային աջակցելուց, կամ մենք կտապալենք ձեր վարչակարգը: Հենց այդպես էլ վարվեց ԱՄՆ-ը»: Ե՛վ Բլերը, ե՛ւ Բուշը հիանալի գիտեին, որ աղքատ թալիբներն անկարող էին պահել սաուդյան բազմամիլիոնատեր բեն Լադենին իր համաշխարհային ընդհատակով, բայց հոչպե՞տք է գրոհել իսլամական աշխարհի իրենց դաշնակիցների վրա: Եվ «այս անգամ ոչ ոք չառարկեց, նույնիսկ չնայած նրան, որ այդ ինտերվենցիան մինչ օրս չի պսակվել կայուն հաջողությամբ», – ամփոփում է Ջոնաթան Փաուելը՝ ամենեւին հաշվի չառնելով մուսուլմանների բողոքները:

Մեծ հաշվով, նրան անհանգստացնում է սոսկ վերջին պատերազմը: «Ամենադժվարին կացությունը ստեղծվեց Իրաքի դեպքում, թեև տեսական փաստարկների տեսանկյունից մեր այդ ինտերվենցիան քիչ էր տարբերվում նախորդներից»: Հիմնական դասը, որ այդ ամենից քաղել է Փաուելը. «Մեզ անհրաժեշտ է միջազգային իրավական համակարգ: Գերտերության կարգավիճակի ճանապարհին գտնվող մյուս խոշոր երկրների արժեքային կողմնորոշիչները խիստ տարբերվում են մերից: Ուստի, օրենքի գերակայությունը ոչ միայն ներքաղաքական, այլև միջազգային ասպարեզում համապատասխանում է ինչպես ԱՄՆ, այնպես էլ միջին մեծության տերությունների շահերին, ինչպիսին Մեծ Բրիտանիան է»: Ընդհանուր առմամբ, հասկանալի է, թե ում շահերից կբխի այդ «օրենքի գերակայությունը», թեպետ, ինչպես ցույց է տվել փորձը, կարելի է եւ առանց դրա էլ հնարովի պատրվակներով ռմբակոծել Հարավսլավիան եւ օկուպացնել Իրաքը:

Պաշտոնաթող բարձրաստիճան պետական պաշտոնյան իրեն կարող է թույլ տալ ասել այն, ինչի մասին Արեւմուտքի առաջնորդները նախընտրում են չբարձրաձայնել: «Մեզ պետք են երաշխավորված եւ արդյունավետ դաշինքներ, որոնք թույլ կտան իրականացնել միջամտություն այն դեպքերում, երբ միջին մեծության երկրները, ինչպիսին իմ հայրենիքն է, չեն կարող դա միայնակ անել: Սա նշանակում է, որ Ֆրանսիայի հետ համագործակցությունում մեզ հարկավոր է ստեղծել արդյունավետ եվրոպական ինտերվենցիոնիստական ուժեր: Սակայն դրա համար նախեստառաջ անհրաժեշտ է երաշխավորել, որ ԱՄՆ-ը չի

վերադառնա իզոլյացիոնիզմին»: Այսինքն՝ ԱՄՆ մասնակցությունը պարտադիր է:

ՆԱՏՕ-ի դաշինքը ոչ ոք չի պատրաստվում արձակել: «Սառը պատերազմում» հաղթանակից հետո այն արդեն չի կարող ձեւացնել, թե ստեղծված է պաշտպանության համար: Այն ինտերվենցիայի գործիք է: Ու եթե նա դրա համար չափազանց դանդաղաշարժ է, կստեղծվեն առանձին ուժեր: Ոչինչ չի խանգարի «մարդասիրական» շահերից բխող նոր պատերազմներ մղել:

* * *

Ինչո՞ւ մի դեպքում տեղի է ունենում մարդասիրական ինտերվենցիա, իսկ մյուսում՝ ոչ: Բացատրությունը պարզ է. մարդասիրական գործողություն անցկացնել չի կարելի, եթե սպանված խաղաղապահների թիվը գերազանցում է խաղաղ բնակչության շրջանում զոհերի թվին, որը նրանք կարող էին կանխել: Ակնառու օրինակ. 1992թ. Սոմալիում ԱՄՆ անցկացրած՝ ՄԱԿ-ի կողմից աջակցություն ստացած գործողությունը: Սոմալեցիները, որոնց ամերիկյան զինվորները պետք է պարեն մատակարարեին, սկսեցին հզոր ռազմական դիմադրություն ցույց տալ: Այսպիսով, նրանք թույլ չտվեցին չեզոքացնել ապօրինի զինված խմբավորումները եւ սնել իրենց: Գործողությունն անընդունելի կորուստների պատճառով հարկ եղավ դադարեցնել:

Այդ նույն պատճառով, կարծում է Բրուքինգի ինստիտուտի՝ ԱՄՆ-ում քաղաքականության ճանաչված վերլուծական գիտահետազոտական կենտրոնի գիտական աշխատակից Մայքլ Օ'Րենլոնը, Չեչնիայում մարդասիրական ինտերվենցիա չանցկացվեց: Ինչպես նա արտահայտվեց, ակնհայտ էր, որ խաղաղապահներին հիմնականում հարկ է լինելու կռվել ռուսական զորքերի հետ, այլ ոչ թե չեչեններին պարեն մատակարարել:

Չեչնիան «ազատ աշխարհի» բոլոր իրավապաշտպաններին շատ է անհանգստացնում: «Յյունան Ռայթս Վոտչ»-ը, «Միջազգային համայնություն»-ն ու ԵԱՀԿ-ն արդեն տասը տարուց ավելի անցկացնում են հանրապետությունում զոհերի անուղղակի հաշվարկում եւ պահանջում են «Ռուսաստանի անխոհեմ կուրսի» փոփոխում: Հիմնական միտքն է. Չեչնիան հանդիսանում է միջազգային կենսական խնդիր, որը պահանջում է համաձայնեցված, հավաքական, ոչ բռնի միջազգային անդրադարձ: Ոչ բռնի անդրադարձը ենթադրում է բանակցություններում միջազգային միջնորդություն ու Եվրամիության, ապա եւ ՆԱՏՕ-ի խաղաղապահ զորքերի տեղակայում ՄԱԿ-ի հովանու ներքո: Համուն երեխաների...

Մարդասիրական ինտերվենցիան Չեչնիայում պատրաստել է ամերիկյան արհեստավարժ «փրկարար» Ֆրեդ Քյունին: Նա համբավ էր ձեռք բերել 1991թ. Ծոցի առաջին պատերազմից հետո: Այն ժամանակ, Սադամ Հուսեյնի պարտությունից եւ շիաների անհաջող ապստամբությունից հետո, Իրաքի միլիոնավոր քրդեր հայտնվեցին կործանման սպառնալիքի տակ: Նրանք նետվեցին Թուրքիա, սակայն նա փակեց սահմանը: ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն անհապաղ որոշում կայացրեց փրկարար գործողության անցկացման մասին, իսկ ԱՄՆ-ը դա իրագործեց՝ ստեղծելով փաստացի անկախ իրաքյան Քուրդիստան: Այնուհետեւ նույն սցենարը ճշտությամբ կրկնվեց Կոսովոյում, բայց արդեն այլ մարդկանցով:

20-րդ դարավերջին աշխարհը խիստ կերպափոխվեց, եւ ԱՄՆ այն ժամանակվա նախագահ Բիլ Քլինթոնին այլեւս դժվար էր կոնֆլիկտների գոտիներում օգտագործել ԿՅԿ-ին կամ իր վարչակազմի գործիչներին: Նախաբեմ դուրս եկան համեստ մասնավորներ, որոնք այնքան էլ չէին ցուցադրում իրենց գործունեությունը: 1993թ. Ֆրեդ Քյունին Բոսնիայում Ջորջ Սորոսի փողերով, սակայն ՄԱԿ-ի պատվերով կազմակերպեց մարդասիրական ինտերվենցիա: Դրանից առաջ նա Սոմալիում այնքան էլ հաջող չէր աշխատել:

1995թ. ապրիլին Քյունին մեկնեց Չեչնիա: Համարվում է, որ արդեն ամեն ինչ պատրաստ էր մարդասիրական ինտերվենցիայի համար: Համենայնդեպս, տասնյակ հազարավոր փախստականներ արդեն ճամբարներով դուրս էին թափվել, բարձրաձայն միտինգ էին անում հեռուստախցիկների առջեւ: Համաշխարհային ՁԼՄ-ն ամբողջ թափով ըմբռնվեցին էին չեչենական ժողովրդի ողբերգությունը: Բայց Քյունիի հիմնական գաղափարը Գրոզնիից «ռուս տատիկներին» փրկելն էր: Ռուս զինվորներին եւ հասարակական կարծիքը մեղմելու համար: Դա պետք է անեին ամերիկյան զինվորները՝ այդ ձեւով կառչելով Հյուսիսային Կովկասից: Սակայն Մոսկվայում ամերիկյան դեսպան Թոմաս Փիքերինգը նրան հայտնեց, թե Վաշինգտոնը Կովկասում ռազմավարական շահեր չունի: Շահերն, իրոք, հետո երեւան եկան:

Քյունին, իրեն վտանգի ենթարկելով, Նազրանից մեկնեց Ջոհար Դուդաեւի հետ հանդիպման, որպեսզի համաձայնեցներ գործողությունը: Եվ երեք ուղեկիցների հետ անհետ կորավ: Ամենայն հավանականությամբ, նրանց վերացրել էին այն չեչենները, որոնց բնավ էլ ցանկալի չէր «շարիաթական հանրապետության» փոխարեն ստանալ ամերիկյան հսկողություն:

Բայց դա չէր Չեչնիայում, այսինքն՝ Ռուսաստանում արեւմտյան ինտերվենցիայի փորձի տապալման պատճառը: Խանգարեցին ռուսա-

կան միջուկային զենքը եւ նախագահ Ելցինի անգիջողականությունը: Նա շատ բաներում գնում էր գիջումների, սակայն ոչ այս հարցում, որքան էլ ձգտում էին նրան քամել «գործընկերները»:

Այժմ վերընթեռնելով 1990-ական թվականների հրապարակումները՝ զարմանք ես կտրում. եվրոպական ու ամերիկյան պատկառելի պրոֆեսորներ, քաղաքագետներ, քաղաքական գործիչներ դատողություններ են անում, թե ինչպես հակազդել «Մոսկվայի ինտերվենցիային Չեչնիայում», թեև ոչ ոք չէր ընդունում Իչկերիայի անկախությունը: Եվ սաստիկ վշտանում էին, որ Արեւմուտքում չկա միասնական կարծիք Չեչնիա գործեր մտցնելու վերաբերյալ, որոնք «ընդունակ կլինեն դիմակայել ռուսական բանակին եւ աջակցել չեչենական դիմադրությանը»:

2001թ. սեպտեմբերի 11-ից հետո նման դատողությունները գրեթե դադարեցին, սակայն աստիճանաբար ամեն ինչ վերադառնում է ի շրջանս յուր: Այսօր իրավապաշտպանները խոսում են Չեչնիայից հազարավոր անհետ կորածների ու կադիրովականների գազանությունների մասին: Պնդվում է, թե ոչինչ չի փոխվել, պատերազմը գնում է առաջվա պես՝ նույն մասշտաբով: Բայց դա մարդասիրական ինտերվենցիայի համար այլեւս թույլ առիթ է. անգամ փախստականների ճամբարներ չեն մնացել:

ԶԼՄ-ում Դարֆուրը եւ Սուդանը վաղուց առանձին են հորջորջվում, կարծես այն արդեն միասնական պետություն չէ: Ի լրումն Աֆրիկյան միության խաղաղապահների, շուտով Սուդան կմեկնի լրացուցիչ զորակազմ՝ ՄԱԿ-ի հովանու ներքո: Վերջին հաշվով, Դարֆուրը կարող է անկախանալ: Երբ պարզվի, որ միլիոնավոր փախստականների ու հարյուր հազարավոր սպանված խաղաղ քաղաքացիների մասին տվյալները հնարովի են, այն այլեւս նշանակություն չի ունենա: Աշխարհի վերաբաժանման գործում ազատական-ժողովրդավարական Արեւմուտքն իր օգտին եւս մի հաջողված մարդասիրական ինտերվենցիա կգրանցի:

«Независимое военное обозрение»

nvo.ng.ru

ՑԵՂԱԿՐՕՆԻ ԴԱԲԱՆԱՆՔԸ

Հայ են:

Ես աւանդապահն եմ Հայոց ազնիւ արիւնին:

Ես ժառանգորդն եմ ու տէրը Հայաստանի:

Ես պահակն եմ Ցեղիս հոգեւոր հարստութեանց ու դրօշակիրը անոր պատմական կոչումին:

* * *

Ես կը դաւանիմ ու կը պաշտեմ ցեղիս ստեղծագործ Աստուածը:

Ցեղս մեծ է ու արժէքաւոր:

Ոյժի անսպառ աղբիւր է նա, գիտակցութեան ջահ, առաջնորդ եւ ապաւեն:
Ցեղս արիւնի սրբազան միութիւնն է, որ ճակատ կը յարդարէ թշնամիին դիմաց եւ ներքին պառակտումները կը վերացնէ:

Ցեղս ընկերային արդարութեան անշեղ դատաւորն է, որ կը մերժէ դասակարգային ամեն հասկացողութիւն:

Հայաստանը հարազատ մայրն է ամեն Հայու՝ պարզեւաբաշխ ու լիառատ:

* * *

Ցեղակրօն եմ:

Ես նուիրուած եմ Ցեղիս պայքարին ու յաղթանակին:

Իմ կեանքս, կարողութիւններս ու նուաճումներս - դիրք, փառք եւ հարստութիւն - կը պատկանին ու կը ծառայեն ո՛չ թէ ինձ, այլ՝ Ցեղիս:
Իմ գոյութիւնս մէկ նպատակ ունի միայն - անաղարտ պահել երակներուս արիւնը եւ Ցեղս տեւականացնել:

Իմ կեանքս մէկ արդարացում ունի միայն - տիրանալ հայրենի սուրբ հողին եւ կառչիլ անոր:

Իմ մեծագործ նախահայրերուս պատմութիւնը, մշակոյթը եւ լեզուն ինձնով չեն վերջանար, այլ՝ կը շարունակուին ու կը ծաղկին ինձնով:

* * *

Ես կը լսեմ կանչը իմ վտանգուած Ցեղիս:

Արիւնիս մէջ կը զգամ պայքարի կրակը եւ հոգիիս մէջ՝ արեւը հաւատքի:

Ցեղիս ու Հայրենիքիս համար պատրաստ եմ գործելու եւ մեռնելու:

Որոշումս անդարձ է, կամքս՝ անընկճելի:

Ահա կ'ուխտեմ ես Մամիկոնեան զօրավարներու մեռնելու ուխտով.
«Քաջութեամբ մեռցուք ի վերայ աշխարհիս մեր եւ ի վերայ ազգիս մեր եւ մի՛ տեսցեն աչք մեր կոխան ոտից պղծալից լեալ զսրբարանս մեր»:

Ուխտեցի՛:

Հետեւեցէ՛ք ինձ:

1943թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ռուբեն Սաֆրաստյան	
ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ	
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ	1
Արաքս Փաշայան	
ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՓՈՐՁԸ	6
Ռուբեն Մելքոնյան	
ԱՐՄԱՏՆԵՐԻ ՈՐՈՆՈՒՄ	11
Սեւակ Սարուխանյան	
ԱԴՐԲԵՋԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ	
ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ	15
Գագիկ Տեր-Հարությունյան	
ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	20
Սարգիս Հարությունյան	
ՆՈՐ ԻՐԱՎԻՃԱԿ ՄԵՐՋԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ	24
Դավիթ Հովհաննիսյան	
ԿՈՍՈՎՈՅԻ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ	29
Վիկտոր Մյասնիկով	
ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՆՏԵՐՎԵՆՑԻԱ	35
ՑԵՂԱԿՐՕՆԻ ԴԱԻԱՆԱՆՔԸ	40

*Շապիկի վրա պատկերված է
Գայլատու լիճը (Բայազետ)*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Սելիք-Աղանյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:
Էլ. փոստ՝ hanrapetakan@hkh.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 3,25 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:
Վկայական՝ ՕՄՍ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: